# ծիրանի ծառ apricot tree

# ԴԵԲԵՏ
# DEBET

կատալոգ catalogue

Երևան Yerevan
ֆիլմադարան filmadaran
2023

ՀՏԴ 791
ԳՄԴ 85.37
Ծ 583

Կազմող՝ Արթուր Վարդիկյան
Ձևավորողներ՝ Գարեգին Զաքոյան, Սոնա Միքայելյան
Գլխավոր խմբագիր՝ Գարեգին Զաքոյան

Compiled by Artur Vardikyan
Design by Garegin Zakoyan, Sona Mikayelyan
Chief Editor Garegin Zakoyan

Ծ 583 **Ծիրանի ծառ վավերագրական ֆիլմերի IX միջազգային փառատոն**. կատալոգ.– Եր. Ֆիլմադարան, 2023.– 120 էջ:
The IX Apricot Tree International Documentary Film Festival. Catalog.– Yerevan, Filmadaran, 2023.– 120 pages.

«Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի IX միջազգային փառատոնի կատալոգն իր մեջ ներառում է տեղեկություններ փառատոնում ընդգրկված բոլոր մրցութային և արտամրցութային ֆիլմերի և դրանց հեղինակների, ժյուրիի անդամների մասին:

The IX Apricot Tree International Documentary Film Festival catalogue includes information about all the film included in the competition and non-competition programs of the festival, as well as their authors and Jury members.

**ISBN 978-99930-851-9-5**

© «Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման ՀԿ, 2023
© Filmadaran Film Culture Development NGO, 2023

**«ԾԻՐԱՆԻ ԾԱՌ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ 9-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ**
**9TH APRICOT TREE INTERNATIONAL DOCUMENTARY FILM FESTIVAL**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ**
**SUPPORTED BY THE REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT**



**«ԾԻՐԱՆԻ ԾԱՌ»<br>ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ<br>ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ<br>ՓԱՌԱՏՈՆԻ<br>ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻՆ ԵՎ<br>ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Սիրելի բարեկամներ,

Ջերմորեն ողջունում եմ «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի կազմակերպիչներին, հյուրերին և մասնակիցներին փառատոնի մեկնարկի կապակցությամբ:

Փառատոնն իրավամբ ապացուցել է իր կենսունակությունը, դարձել Հայաստանի մարզային մշակութային կյանքի անբաժանելի մասը, հայկական վավերագրությունը օտարազգի արվեստագետներին և կինոգործիչներին ներկայացնելու լավագույն հարթակ:

Միևնույն ժամանակ, «Ծիրանի ծառ» կինոփառատոնը հնարավորություն է ընձեռում հայ կինոսերներին ծանոթանալու համաշխարհային վավերագրությանը, օտարազգի կինոգործիչների աշխատանքներին:

Վստահ եմ, որ այս տարի ևս, երբ մենք նշում ենք Հայ կինոյի 100-ամյակը, փառատոնն իր հագեցած ծրագրով անմոռանալի պահեր կպարգևի բոլոր մասնակիցներին, հետաքրքիր հարթակ դառնալով նոր մտքերի և փորձի փոխանակման համար:

«Ծիրանի Ծառ» վավերագրական ֆիլմերի փառատոնի կազմակերպիչներին մաղթում եմ նորանոր հաջողություններ, մասնակիցներին՝ ստեղծագործական ներշնչումներ և հետաքրքիր մտահղացումներ, իսկ փառատոնի հանդիսատեսին՝ գեղագիտական վառ տպավորություններ:

***ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,<br>ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ<br>ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ***

## TO THE ORGANIZERS AND PARTICIPANTS OF THE APRICOT TREE INTERNATIONAL DOCUMENTARY FILM FESTIVAL



Dear friends,

I warmly salute the organizers, guests and participants of the Apricot Tree International Documentary Film Festival on the occasion of the festival's start.

The festival has truly proven its vitality and become an integral part of the regional cultural life of Armenia, the best platform for presenting Armenian documentary cinema to foreign artists and filmmakers.

At the same time, the Apricot Tree film festival provides an opportunity for Armenian film lovers to familiarize themselves with world-wide documentary cinema and the works of foreign filmmakers.

I am sure that this year too, when we celebrate the $100^{th}$ anniversary of Armenian cinema, the festival will provide unforgettable moments to all participants with its rich program, becoming an interesting platform for the exchange of new thoughts and experiences.

I wish the organizers of the Apricot Tree International Documentary Film Festival new successes, creative inspirations and interesting ideas for the participants and bright aesthetic impressions for the festival audience.

***RA MINISTER OF EDUCATION,***
***SCIENCE, CULTURE AND SPORTS***
***ZHANNA ANDREASYAN***



Սիրելի՛ բարեկամներ,

Սրտանց ողջունում եմ ձեզ այս մտերմիկ հայկական գյուղում:

Համոզված եմ, որ Դեբետում ապրած օրերը բարի ու բեղմնավոր հետք կթողնեն ձեր սրտերում: Բոլորս կհարստանանք նոր հանդիպումներով ու տպավորություններով, գուցե փոքր, բայց աճ կունենանք մեր ստեղծագործական կյանքում:

Ապրելով գյուղացու տանը՝ դուք բացառիկ հնարավորություն կունենաք անմիջականորեն շփվելու և մոտիկից ծանոթանալու հայ մարդու կյանքին, նրա սովորույթներին ու բնավորությանը:

Տասը երկրներից կինոգործիչներ են հավաքվել Դեբետում: Գյուղի փոքրիկ տարածքը, անշուշտ, կնպաստի մասնակիցների ինտենսիվ շփմանը թե միմյանց և թե հայ գործընկերների հետ: Կստեղծվեն նոր կապեր, կծնվեն համատեղ ծրագրեր:

Դեբետի և շրջակա գյուղերի բնակիչների համար այս փառատոնը մշակութային իսկական իրադարձություն է: Ութ օր մեծ էկրանին նրանք կտեսնեն տարբեր երկրների և մայրցամաքների մարդկանց կյանքը՝ նրանց ձգտումները, հոգսերը, ուրախությունն ու վիշտը և, անշուշտ, այն յուրահատուկ աշխարհայացքը, որը ձեզնից յուրաքանչյուրը փորձել է փոխանցել իր ֆիլմի միջոցով:

Փառատոնի ժյուրին կորոշի ու կպարգևատրի հաղթողներին, բայց ձեզնից յուրաքանչյուրն արդեն հաղթել է, քանի որ այստեղ եք, քանի որ ձեր ֆիլմերը ընտրվել են բազմահարյուր ֆիլմերի միջից:

Հետևաբար ողջունելով ձեզ՝ միաժամանակ շնորհավորում եմ ձեզնից յուրաքանչյուրի հաղթանակը: Համարենք, որ մեր փառատոնը հաղթողների տոն է:

Շնորհավո՛ր:

Շնորհավո՛ր «Ծիրանի ծառ» տոնը:

*Գարեգին Զաքոյան*
*«Ֆիլմադարան» ՀԿ-ի նախագահ*
*օգոստոս, 2023*



Dear friends!

I warmly welcome you in this comfy Armenian village.

I am confident that the few days you will spend in Debet will leave a good and fruitful trace in your hearts. We will all enrich ourselves with new meetings and impressions, and all of that will have a small, but nonetheless beneficial effect on our further professional activities.

Living in villagers' families, you will get a unique opportunity to directly get acquainted with the life, customs and character of an Armenian. Filmmakers from 10 countries are here for the festival. Compact living in a small village will allow all participants to communicate intensively both among themselves and with Armenian colleagues. New contacts will be made, mutual projects will be born.

For the residents of Debet and surrounding villages, our festival is a huge cultural event. For 8 days, on the big screen, they will witness the thoughts, hopes, problems, joys and sorrows of people from different countries and continents, and of course, that unique worldview that each of you attempted to convey through your film.

The jury of the festival will determine and award the winners, but each of you has already won, because you are here, because your films were selected from hundreds of submissions.

Therefore, by welcoming you, I am also congratulating you with your victory. Let us consider our festival a celebration of winners.

Congratulations!

Happy "Apricot Tree" celebration!

*Garegin Zakoyan*
*Filmadaran NGO president*
*August, 2023*

# Մեր փառատոնի մասին

2015 թվականին հիմնադրված «Ծիրանի ծառ» կինոփառատոնը, որի նախաձեռնողը «Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման հասարակական կազմակերպությունն է, վավերագրական կինոյի ամենամյա փառատոն է, որը տեղի է ունենում ուշ ամռանը՝ գյուղում: Առաջին փառատոնը տեղի է ունեցել Երևանում, երկրորդը՝ Երևանում, Ուջան գյուղում և Գյումրիում, իսկ 2017-ին փառատոնը մի քանի տարով հաստատվել է Ուջանում: 2023 թվականին փառատոնը կայանում է Լոռու մարզի Դեբեդ գյուղում:
Փառատոնի կազմակերպիչների համոզմունքն է, որ միայն ուրիշի հետ շփվելով ենք մենք ճանաչում ինքներս մեզ: Ճանաչելով զիս՝ ձգտում ենք ճանաչել նաև օտարին, և ճանաչելով միայն՝ լցվում նրա հանդեպ համակրանքով: Եվ հակառակը՝ անծանոթն ու անհասկանալին անվստահություն, վախ ու թշնամանք են ծնում: Ճանաչել տարբեր ազգերի ու ցեղերի, սոցիալական ու կրոնական խմբերի կյանքն ու բարքը, նրանց ավանդույթները, խնդիրներն ու ապրումները՝ սա է «Ծիրանի ծառ»-ի կոչն ու ձգտումը: Եվ ոչինչ չի կարող ավելի լավ ու արդյունավետ



«Ծիրանի ծառ»-ի ողջ թիմը
The whole team of Apricot Tree

իրականացնել այդ ձգտումը, քան «վավերագրական» կինոարվեստը, որի շնորհիվ հանդիսատեսը ոչ միայն տեսնում, այլև ապրումակցում է էկրանային իրականությանը:
Գյուղական կինոփառատոն կազմակերպելու գաղափարը ծնվել է Հայաստանում մշակութային կյանքն ապակենտրոնացնելու ցանկությունից․ մշակութային միջոցառումների գերակշիռ մասը տեղի է ունենում մայրաքաղաք Երևանում կամ Գյումրիում, իսկ գյուղական բնակչությունը մեծ մասամբ զրկված է միջազգային և անգամ հայրենական ժամանակակից արվեստի հետ շփվելու հնարավորություններից: «Ծիրանի ծառը» նպատակ ունի գյուղական բնակչությանն արդի մշակութային կյանքի ակտիվ ու անբաժանելի մաս դարձնել:
Փառատոնի ձևաչափն արդեն իսկ մեծ արդյունք է գրանցել: 2017 թվականին փառատոնի գլխավոր դափնեկիր իրանցի ռեժիսոր Շահրամ Բադախշան Մեհրը, սիրահարվելով գյուղական միջավայրին և իրեն հյուրընկալած ուջանցիների ընտանիքին, 2019 թվականին վերադարձել է Ուջան և հայ-իրանական համատեղ արտադրության լիամետրաժ վավերագրական ֆիլմ նկարահանել՝ «Ուջանյան պատմություն», որի համաշխարհային պրեմիերան տեղի է ունեցել 2021 թվականին՝ VII «Ծիրանի ծառ»-ի բացման արարողությանը:
Փառատոնը ցուցադրում է բոլոր ժանրերի կարճամետրաժ ու լիամետրաժ վավերագրական ֆիլմեր՝ ազգագրական, մարդաբանական, փորձարարական, անիմացիոն և այլն: Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր տարի ցուցադրվում է 30-35 ֆիլմ: 2023-ին 10-ական ֆիլմ կլինի Կարճամետրաժ և Լիամետրաժ մրցույթներում: Արցամրցութային բաժնում տեղ կգտնեն «Հայ կինո 100» ծրագիրը, Հատուկ ցուցադրությունները և Հայաստանի ու Արցախի արդի իրադրության մասին խորհող «Մունք ուրուր օնինք» ծրագիրը: Փառատոնի փակումից մեկ օր անց Երևանում՝ Հայաստանի ազգային գրադարանում կցուցադրվի 2022-ին Մարտոն Ադոյանի անվան մրցանակին արժանացած «Երկիր իգական» ֆիլմը: Փառատոնի օրերին էլ ռուս-վիետնամուհի արվեստագետ Թհու Ան Նգույենը տիկնիկների պատրաստման աշխատարան կվարի Դեբետի երեխաների համար:
2019 թվականին «Ֆիլմադարան»-ը նաև հիմնադրել է Ուջանի կինոդպրոցը, որտեղ ուջանցի երեխաներն ու երիտասարդները սովորում էին զարգացնել իրենց արտիստիկ գաղափարներն ու «Ֆիլմադարան»-ի կինոմասնագետների աջակցությամբ ստեղծել սեփական կարճամետրաժ վավերագրական ֆիլմերը: Կինոդպրոցի շրջանակում ստեղծված ֆիլմերը ցուցադրվում էին փառատոնի փակման արարողությանը: 2023 թվականին ավելի մեծ՝ եռամսյա կինոդպրոցի դասընթացներն իրականացվեցին Դեբետում՝ փառատոնին ընդառաջ:



## About Our Festival

Established in 2015 by Filmadaran Film Culture Development NGO, Apricot Tree (ATIEFF) is a documentary film festival that takes place annually in an Armenian village in late August. The first edition took place in Yerevan, the second was a split between Yerevan, the city of Gyumri and the village of Ujan. Finally, in 2017 the festival established itself in Ujan for the next 6 years. In 2023, the festival is taking in the village of Debet in Lori.

The idea to organize a village film festival came from the desire to decentralize the cultural life in Armenia, where the vast majority of cultural events take place in the capital city of Yerevan and the rural population is basically devoid of opportunities of coming into contact with international and even local art. After the collapse of the Soviet Union, villages were mostly ignored by cultural policy-makers for 3 decades. Apricot Tree has an aim of righting this wrong and making the rural population an active and integral part of modern Armenian cultural life.

The festival format has already bore fruits. The Grand Prize winner of the 2017 edition Shahram Badakhshan Mehr was so enchanted by the village atmosphere and his host family that he came back to Ujan in 2019 and shot a feature-length Iranian-Armenian coproduction docudrama *Ujanian Story*, which had its world premiere as the opening film of the VII Apricot Tree IDFF in 2021.

The festival organizers strongly believe that only by coming into contact with the other do we grasp ourselves. By grasping ourselves, we seek to understand and get to know the other and by understanding, we start to sympathize with them. In contrast, the unknown and the unclear generate fear, distrust and enmity.

Understanding the life, manners and traditions, struggles and experiences of other nations, tribes, social and religious groups – this is what Apricot Tree calls for and aspires to. And nothing can realize that aspiration better and more effectively, than the week-long coexistence in the same space of people from various parts of the world and also “documentary” cinema, which lets the audience not only see, but also sympathize with the reality of the screen.

The festival screens documentary films of all genres, including ethnographic, anthropological, experimental and even animated. Non-competition programs include tributes to renowned filmmakers and special screenings. In total, the festival screens around 30-35 films every year. In 2023, the festival has 10 feature-length and 10 short documentaries in the two respective competition programs. The out of competition section includes the “Armenian Cinema-100” program, Special Screenings and a reflection on the current state of Armenia and Artsakh within the “We Have Each Other” selection. Also, a special screening of the 2022 Martun Adoyan award winner *Terra Femme* will be held in the National Library of Armenia in Yerevan after the closing of the festival. And during the festival, Vietnamese-Russian artist Thu Anh Nguyen will hold a puppet making workshop for the Debet kids.

In 2019. the festival also established the Ujan Film School, where young Ujanians 12-15 years of age learned to develop their artistic ideas and make their own short documentary films with various equipment and especially their mobile phones. The films were then screened at the closing ceremony of the festival. The summer of 2023 saw the implementation of the three-month long Debet Film School program, the fruits of which will be screened at the closing.







# Դեբետի մասին
# About Debet





Լոռու մարզի Դեբեդ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 25կմ հեռավորության վրա՝ Փամբակ գետի աջակողմյան վտակի՝ Ալերեքսի անտառապատ գյուղատնտեսությունում, Գյումրի-Բագրատաշեն մայրուղուց 2,5կմ հեռավորության վրա: 1858 թվականին Մարց գյուղից 17 ընտանիք տեղափոխվում է այստեղ, իսկ գյուղի բնակչության մի մասը Արևմտյան Հայաստանից 1828-31 թվականներին գաղթականների ժառանգներն են: Մյուս մասը Ղարաբաղից է գաղթել՝ լեզգիական արշավանքներից հետո: Այժմ գյուղի բնակչությունը մոտ 850 մարդ է: Մինչև 2023 թվականի հուլիսը գյուղը կոչվում էր Դեբետ:

Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 980-1080մ բարձրության վրա: Դեբեդ գյուղի տարածքը լեռնային է, մեղմ կլիմայով: Ձմեռը տևում է 140-160 օր: Տարեկան օդի միջին ջերմաստիճանը +32C է: Ձմեռվա բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -28C, ամառվա առավելագույն ջերմաստիճանը՝+35C: Տարվա տեղումները՝ միջին հաշվով 660մմ են, ընդ որում՝ վեգետացիոն շրջանում 500մմ են:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Վերջին 2 տարում մեծ թափով առաջ է գնում հողագործությունն ու տուրիզմը:

Դեբեդ գյուղի գրեթե բոլոր փողոցները լուսավորված են, միջհամայնքային ճանապարհը ասֆալտապատվում է, որի շրջանակում ասֆալտապատվում է նաև ներհամայնքային ճանապարհի մի հատվածը: Վերջին երկու տարում գյուղում բացվել է 8 հյուրատուն, որոնք նույնպես նպաստում են տուրիզմի զարգացմանը:

Գյուղում գործում է նաև COAF-ի (Հայաստանի մանուկներ հիմնադրամ) ՍՄԱՐԹ կենտրոնը, որը նպաստում է տեղի և հարակից գյուղերի երեխաների զարգացմանը:

The Debed community of Armenia's Lori Province is located 25 km from the provincial center, in the forested agricultural zone of Pambak river's right tributary called Alereks, and 2,5 km from the Gyumri-Bagratashen highway. In 1858, 17 families from the village of Marts moved here. Part of the population of the village are the descendants of the 1828-31 emigrants from Western Armenia. The other part migrated from Karabakh after the Lezgian invasions. Currently the village has a population of about 850 people. Until July 2023, the village was called Debet.

The community is located at an altitude of 980-1080m above sea level. The area of Debed is mountainous with a mild climate. Winter lasts 140-160 days. The average annual air temperature is +32C. The absolute minimum temperature in winter is -28C, while the maximum temperature in summer is +35C. Annual rainfall is 660mm on average, and 500mm in the vegetation period.

The population is mainly engaged in livestock farming. In the last 2 years, agriculture and tourism have been developing with great momentum.

Almost all the streets of Debed are illuminated. The intercommunal road is being asphalted and within the frames of that the intracommunal roads are also being asphalted. In the last 2 years, 8 guest houses were established in the village, which also contributed to the development of tourism.

Since 2018, COAF (the Children of Armenia Fund) opened its SMART center in the village, which contributes to the development of children in the local and neighboring settlements.







# Ժյուրի

# Jury



## Էլահե Նոբախտ

Էլահե Նոբախտը միջազգային կինոպրոդյուսեր ու դիստրիբյուտոր է Իրանից, որն 2022 թվականին արժանացել է Կաննի կինոշուկայի ներկայացուցիչների կողմից Տալլինի «Սև գիշերներ» կինոփառատոնի Համարտադրական շուկայում ամենախոստումնալից երիտասարդ պրոդյուսերներին տրվող մրցանակին: Նա Eli Image միջազգային արտադրական և դիստրիբյուտորական ընկերության հիմնադիր տնօրենն է, ինչպես նաև Իրանի պրոդյուսերների ասոցիացիայի և Իրանի վավերագրական կինոյի պրոդյուսերների ասոցիացիայի ակտիվ անդամ է: Նա եղել է բազմաթիվ կինոփառատոների ժյուրիի անդամ, իսկ նրա արտադրած կարճամետրաժ ու լիամետրաժ ֆիլմերը ցուցադրվել են ավելի քան 65 միջազգային կինոփառատոներում, որոնցից են Բեռլինալեն, Ամստերդամի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնը (IDFA), ZagrebDox-ը, HotDocs-ը և այլն: Նոբախտը նաև «Որոնելով Ֆարիդեին» ֆիլմի դիստրիբյուտորն էր, որը 2020 թվականին Իրանի պաշտոնական հայտն էր Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակաբաշխությանը:

## Elaheh Nobakht

Elaheh Nobakht is an international film producer and distributor from Iran. She has received the Producers Network Prize for Promising Young Producers awarded by Cannes Marché du Film in the Co-Production market of Tallinn Black Nights Film Festival 2022. She is the CEO of the International Production and Distribution Film Company, ELI Image. She is also an active member of the Iranian Producers Association (IPA) and a member of the Iranian Documentary Producers Association. She has been a jury member of various film festivals, while the short and feature-length films she has produced have been selected for more than 65 international film festivals such as Berlinale, IDFA, ZagrebDox, HotDocs etc. Nobakht was the distributor of the film *Finding Farideh*, which became Iran's official entry to the 2020 Academy Awards.

## Վենսան Սորել



Վենսան Սորելը ֆրանսիացի կինոռեժիսոր է ու կինոգիտության դասախոս Գրենոբլի համալսարանում, որտեղ նա պատասխանատու է ստեղծագործական վավերագրության մագիստրոսական ծրագրի համար, որը համատեղ կազմակերպում են համալսարանն ու Լուսասի Ardèche Images ասոցիացիան: Նա մասնակցում է վավերագրական ֆիլմերի սցենարի հեղինակման, ռեժիսուրայի և արտադրության հարցերին: Ժան-Լուի Կոմոլիի հետ համահեղինակել է «Cinéma, mode d’emploi. De l’argentique au numérique» գիրքը, որը հրատարակել է Verdier-ը 2015 թվականին: Նրա աշխատանքը կապված է կինոյի տեսության հետ: Այս հետազոտությունները՝ թե՛ տեսական, թե՛ ստեղծագործական, մշակվում են Արտավազդ Փելեշյանի կամ Վիտորիո Դե Սետայի կինեմատոգրաֆիական ժեստերի հիման վրա, և ուսումնասիրում են, թե տեխնոլոգիաներն ինչ ազդեցություն ունեն կինոռեժիսորների երևակայության ու նրանց ստեղծագործական գործընթացի վրա:

## Vincent Sorrel

Vincent Sorrel is a filmmaker and lecturer in film studies at the University of Grenoble where he is responsible for the master’s degree in creative documentary organized between the university and Ardèche Images association in Lussas. He intervenes on the questions of writing, directing and production of documentary films. Co-author with Jean-Louis Comolli of the book “Cinéma, mode d’emploi. De l’argentique au numérique”, published by Verdier in 2015, his work concerns cinematographic practices. This research, both theoretical and artistic, is developed through films on the cinematographic gestures of Artavazd Pelechian or Vittorio de Seta and publications that question the influence of technology on the imagination of filmmakers and their creative process.



## Վիգեն Ավետիս

Իտալահայ քանդակագործ Վիգեն Ավետիսը ծնվել է 1968 թվականի հունվարի 25-ին Երևան քաղաքում: Սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում, Պոզնանի և Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիաներում: 1998-ից ապրում և ստեղծագործում է Ֆլորենցիայում: 2008-ից «40 ֆլորենտացիներ» միության անդամ է, 2009-ից՝ Ֆլորենցիայի Դոնատելլոյի անվան նկարիչների միության անդամ: 2006 թվականին դասավանդել է Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայում, 2007-ից՝ Պալլացո Սպինելլիի արվեստի և վերականգնման ինստիտուտում: Դոցենտ է: «Սասնա ծռեր, Ծովինարը Սանասարի և Բաղդասարի հետ» շատրվան-հուշարձան արձանախմբի հեղինակն է: Արժանացել է 2008 թվականին Արաբկիրի, 2018 թվականին Ապարանի և 2022 թվականին Կավրիլիայի «Պատվավոր քաղաքացի» կոչումներին: Հայաստանի Մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է «Գրիգոր Նարեկացի» շքանշանով, Իտալիայի թագավոր

Վիտտորիո Էմանուելի Արծաթե շքանշանով: 2014 թվականին արժանացել է Ֆլորենցիայի “Fiorino D’Oro” 1-ին մրցանակին՝ որպես լավագույն քանդակագործ: Վիգեն Ավետիսը կազմակերպել է քանդակագործության բազմաթիվ միջազգային փառատոներ: Նրա քանդակները զարդարում են աշխարհի ամենատարբեր քաղաքները, ցուցասրահներն ու մասնավոր հավաքածուները:

## Vighen Avetis

Italian-Armenian sculptor Vighen Avetis was born on January 25, 1968 in Yerevan. He studied at the Yerevan Fine Arts and Theater Institute and the Fine Arts academies of Poznan and Florence. Avetis lives and works in Florence since 1998. Since 2008, he has been a member of the “40 Florentines” association, and since 2009, he is a member of the Florence Artists Association after Donatello. In 2006, he taught at the Academy of Fine Arts in Florence and since 2007, he teaches at the Palazzo Spinelli Institute of Art and Restoration. He is an associate professor. He is the author of the fountain-monument statue group “Sasna Tsrer, Tsovinar with Sanasar and Baghdasar”. He was named an Honorary Citizen of Arabkir (2008), Aparan (2018) and Cavriglia (2022). He was awarded the “Grigor Narekatsi” order by the Ministry of Culture of Armenia and King of Italy Vittorio Emanuele’s Silver Medal. In 2014, he was awarded with the “Fiorino D’Oro” prize as best sculptor. Vighen Avetis has organized many international sculpture festivals. His sculptures decorate various cities around the world, exhibition halls and private collections.





# Լիամետրաժ ֆիլմերի մրցույթ

# Feature-length competition



## Քորթնի Սթիվենս

Քորթնի Սթիվենսը կինոռեժիսոր է, որն ապրում է Լոս Անջելեսում: Նրա ոչ խաղարկային, փորձարարական ֆիլմերն անդրադառնում են լեզվի երանգներին, պատմական հիշողության ու կանանց կյանքին: Նրա աշխատանքները ցուցադրվել են Բեռլինալեում, Ժամանակակից արվեստի թանգարանում, Նյու Յորքի կինոփառատոնում, Արվեստի ազգային պատկերասրահում, «South by Southwest» կինոփառատոնում, «Garage» ժամանակակից արվեստի թանգարանում, ինչպես նաև Հոնկոնգի, Քեմդենի, Մումբայի, Լյուքսեմբուրգի, Դակայի ու Սան Ֆրանցիսկոյի միջազգային կինոփառատոներում: Նա արժանացել է Ֆուլբրայթի կրթաթոշակին, Կալիֆորնիայի հումանիտար գիտությունների դրամաշնորհին, Մաքդաուելի, Յադդո, Պոկանտիկո ու Սլոան հիմնադրամների կրթաթոշակին, ու «Filmmaker» ամսագրի «Անկախ կինոյի 25 նոր դեմքեր»-ից մեկն էր: Սթիվենսը Ամերիկյան կինոինստիտուտի շրջանավարտ է և համահիմնադրել է լոսանջելեսյան Veggie Cloud միկրոկինոթատրոնը, ինչպես նաև կինոծրագրեր է համադրել Getty-ի, Շարժապատկերի թանգարանի, Union Docs-ի ու Flaherty NYC-ի համար:




**Ֆիլմոգրաֆիա**

Իդա արևմտյան աքսոր (2015),
Խառը ազդանշաններ (2018),
Ամերիկյան հատվածը (համառեժիսոր, 2020),
Կինո-19 (համառեժիսոր, 2020),
Մաքուր կվինտաներ (2021),
Երկիր իգական (2021):



## Պաչո Վելեզ

Պաչո Վելեզը ոչ խաղարկային ֆիլմերի ռեժիսոր է, որ ստեղծագործում է ազգագրության, ժամանակակից արվեստի ու քաղաքական վավերագրության հատման կետում: Նրա լիամետրաժներից մեկը՝ «Ռեյգանի շոուն», ուսումնասիրում է հանրահայտ մի դերասանի կարևորագույն դերակատարումն Ազատ աշխարհի առաջնորդի դերում: Պրեմիերան տեղի է ունեցել Թրայբեքայի կինոփառատոնում և այնուհետ հեռարձակվել է CNN-ով: Նրա մեկ այլ լիամետրաժ՝ «Մանակամանա»-ն, արժանացել է Լոկառնոյի կինոփառատոնի գլխավոր՝ «Ոսկե հովազ» մրցանակին՝ այնուհետ ցուցադրվելով ողջ աշխարհում՝ ներառյալ Ուիթնի Բիենալեում և Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում: Պաչոն Կալիֆորնիայի արվեստների ինստիտուտի մագիստրոսական ծրագրի շրջանավարտ է: Նա կինո է դասավանդել Փրինսթոնի համալսարանում, Հարվարդի համալսարանում, Բարդ քոլեջում, Փարսոնսի նոր դպրոցում և Մասաչուսեթսի արվեստի ու դիզայնի քոլեջում: 2015 թվականին արժանացել է Փրինսթոնի արվեստների կրթաթոշակին: Ներկայումս նա էկրանային հետազոտությունների ամբիոնի դոցենտ է «Նոր դպրոց» համալսարանում:

**Ֆիլմոգրաֆիա**

Բռնազավթում (2002), Մաթիարի որբերը (2003),
Ուտոպիայի վիժվածքները (2010), Մանակամանա (2013),
Դրեգսթրիփ (2015), Մեկնագիծը (կարճամետրաժ, 2017),
Պարոն Դեղին Մարզաշապիկ (կարճամետրաժ, 2017),
Ռեյգանի շոուն (2017), Ամերիկյան հատվածը (2020), Որոնողները (2021):

**Ամերիկյան հատվածը/The American Sector**
*ԱՄՆ, 2020, 68'*
*անգլերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսորներ և սցենարի հեղինակներ՝** Քորթնի Սթիվենս, Պաչո Վելեզ
**Օպերատոր՝** Պաչո Վելեզ
**Պրոդյուսեր՝** Պաչո Վելեզ
**Մոնտաժողներ՝** Դունյա Սիչով, Քորթնի Սթիվենս
**Հնչյունավորող՝** Քորթնի Սթիվենս



18 ամիս շարունակ Քորթնի Սթիվենսը և Պաչո Վելեզը ճանապարհորդում էին ողջ ԱՄՆ-ով, որպեսզի վավերագրեն Բեռլինի պատի այն հատվածները, որոնք ցուցադրված են ավելի քան 75 վայրերում՝ ինչպես լուրջ (Ֆորթ Բենինգ), այնպես էլ տարօրինակ (Լաս Վեգասի «Main Street Station» խաղատուն) տեղերում, և անգամ Կապիտալ համալսարանի կամպուսում: Ընթացիկ հարցազրույցներն անսովոր կերպարների հետ, որոնք պատի կտորների սեփականատերերն են, պահպանում և շփվում են դրանց հետ, թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել ամերիկյան մշակույթի մասին, և ֆիլմի միջոցով Սառը պատերազմի այս մասունքները դառնում են կատալիզատոր՝ ուսումնասիրելու այսօրվա խնդիրները:

## Courtney Stephens

Courtney Stephens is a filmmaker based in Los Angeles. Her non-fiction and experimental films address the contours of language, historical memory, and women’s lives. Her work has been exhibited at the Berlinale, the Museum of Modern Art, New York Film Festival, The National Gallery of Art, South by Southwest, The Garage Museum of Contemporary Art, and the Hong Kong, Camden, Mumbai, Luxembourg, Dhaka, and San Francisco International Film Festivals. She is the recipient of a Fulbright Scholarship, a California Humanities Grant, fellowships from MacDowell, Yaddo, Pocantico, and the Sloan Foundation, and was one of Filmmaker Magazine‘s 25 New Faces of Independent Film. A graduate of the American Film Institute, she co-founded the Los Angeles microcinema Veggie Cloud and has curated film programs for The Getty, Museum of the Moving Image, Union Docs, and Flaherty NYC.

**Filmography**

Ida Western Exile (2015), Mixed Signals (2018), The American Sector (2020), Cinema-19 (co-director, 2020), Perfect Fifths (2021), Terra Femme (2021).

## Pacho Velez

Pacho Velez is a non-fiction filmmaker working at the intersection of ethnography, contemporary art, and political documentary. His feature, *The Reagan Show*, explores a prolific actor's defining role: Leader of the Free World. It premiered at the Tribeca Film Festival before being broadcast on CNN. His feature, *Manakamana*, won a Golden Leopard at the Locarno Film Festival. It played around the world, including at the Whitney Biennial and the Toronto International Film Festival. Pacho received his MFA from CalArts. He has taught filmmaking at Princeton University, Harvard University, Bard College, Parsons the New School, and MassArt. In 2015, he was awarded a Princeton Arts Fellowship. Currently, he is Assistant Professor of Screen Studies at The New School.

**Filmography**

Occupation (2002), Orphans of Mathare (2003), Bastards of Utopia (2010), Manakamana (2013), Dragstrip (2015), The Starting Line (short, 2017), Mr. Yellow Sweatshirt (short, 2017), The Reagan Show (2017), The American Sector (2020), Searchers (2021).

**The American Sector**

*USA, 2020, 68'*
*in English w/ Arm. subtitles*

**Directors and Scriptwriters:** Courtney Stephens, Pacho Velez
**Cinematographer:** Pacho Velez
**Producer:** Pacho Velez
**Editors:** Dounia Sichov, Courtney Stephens
**Sound:** Courtney Stephens

For 18 months, Courtney Stephens and Pacho Velez traveled the US to document sections of the Berlin wall that are on display in over 75 locations, ranging from the serious (Fort Benning) to the bizarre (Main Street Station Casino in Las Vegas) and even the campus of nearby Capital University. Along the way, interviews with unusual characters who own, maintain, and interact with pieces of the wall offer a window into American culture, and through the film, these Cold War relics become a catalyst for exploring today's timely issues.



## Նիկի Պադիդար

Իրանի մայրաքաղաք Թեհրանում ծնված Նիկի Պադիդարը լուսանկարչություն է ուսանել Նյու Յորքի «Նոր դպրոց» համալսարանում և մագիստրոսի աստիճան է ստացել Ամստերդամի համալսարանից՝ մասնագիտանալով երիտասարդական մեդիայի և մեդիաներկայացվածության մեջ: Նրա կարճամետրաժ «Նինոկ» ֆիլմը 2015 թվականին արժանացել է Ամստերդամի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի (IDFA) «Լավագույն մանկական վավերագրություն» մրցանակին: «Այն ամենը, ինչ տեսնում եք» նրա առաջին լիամետրաժ ոչ խաղարկային ֆիլմն է:

**Ֆիլմոգրաֆիա**
Ուղեբեռ (կարճամետրաժ խաղարկային, 2012), Նինոկ (2015),
Աննա. կարգավիճակ (2022), Այն ամենը, ինչ տեսնում եք (2022):

**Այն ամենը, ինչ տեսնում եք/Al wat je ziet**
*Նիդերլանդներ, 2022, 72’*
*հոլանդերեն և անգլերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Նիկի Պադիդար
**Պրոդյուսեր՝** Մեննա Լաուրա Մայեր
**Օպերատորներ՝** Ժան Կունե, Եֆրիմ Ռոթույզեն
**Մոնտաժողներ՝** Նիկի Պադիդար, Ալբերտ Մարկուս, Ֆեստուս Թոլ
**Անիմատոր՝** Անտոն Միշենին
**Հնչյունավորող՝** Դիեգո վան Ուդեն
**Կոմպոզիտոր՝** Ֆին Գրինալ
**Արտադրող ընկերություն՝** Mint Film Office

Ինչ է լինում, երբ ամեն օր ձեզ ոչ թե տեսնում են, այլ ուղղակի նայում են: «Այն ամենը, ինչ տեսնում եք» ֆիլմի հերոսները հայտնվել են մի նոր աշխարհում, որտեղ ոչինչ ասես իր տեղում չէ: Նիդերլանդներում իրենց նոր կյանքում իրենք ակամա ամենօրյա անսպասելի ռեակցիաներ են առաջացնում: Անգամ տարիներ անց՝ իրենք միևնույն է նույն հարցերն են լսում՝ որտեղի՞ց ես, հոլանդերեն խոսու՞մ ես, մաշկդ արևայրվա՞ծ է: Խորհրդածելով, թե ինչ է նշանակում որևէ խմբին պատկանելը, թե



ովքեր են դուրս մղվում խմբերից ու թե ինչպես է օտարի կարգավիճակը շարունակաբար վերահաստատվում, Պադիդարի ֆիլմն առաջին պլան է բերում այն զգացողությունը, երբ մեկը նայում է քեզ: Նիդերլանդներ եկած երեք «նորեկների» հետ ազնիվ, ցավոտ և հումորային հանդիպումները ոճականորեն միահյուսված են Պադիդարի անձնական պատմությանը՝ ստեղծելով համամարդկային ռեզոնանսով ինքնարտահայտման խոցելի տարածություն: «Այն ամենը, ինչ տեսնում եք» խոստովանական կոլաժում, որը պարզ ելքեր չի առաջարկում, ուշադրության կենտրոնում հենց մենք ենք, բայց ֆիլմը միաժամանակ նաև հարց է տալիս՝ ովքե՞ր են «մենք»-ը:

**Պարգևներ**
Լավագույն լիամետրաժ վավերագրություն,
Նիդերլանդցի ռեժիսորների գիլդիա, IDFA, Նիդերլանդներ, 2022:

## Niki Padidar
Born in Tehran, Iran, Niki Padidar studied photography at the New School University in New York and got her master’s degree at the University of Amsterdam, specializing in Youth and Media and Representation in Media. Her short film *Ninoc* took home the IDFA Best Children’s Documentary Award in 2015. *All You See* is her debut feature documentary.

**Filmography**
Baggage (short fiction, 2012), Ninoc (2015),
Anna: status (2022), All You See (2022).



**All You See/Al wat je ziet**
*Netherlands, 2022, 72’*
*in Dutch and English w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Niki Padidar
**Producer:** Menna Laura Meijer
**Cinematographers:** Jean Counet, Jefrim Rothuizen
**Editors:** Niki Padidar, Albert Markus, Festus Toll
**Animator:** Anton Mishenin
**Sound:** Diego van Uden
**Composer:** Fin Greenall
**Production Company:** Mint Film Office

What if from one day to the next, you’re no longer seen, but instead are stared at? The leading characters in *All You See* have ended up in a new world where suddenly nothing seems to align. In their new lives in the Netherlands, they unintentionally provoke reactions on a daily basis. Even after many years, they still hear the same questions over and over again: where are you from, do you speak Dutch, do you tan in the sun? Contemplating questions of what it means to belong, who gets excluded, and how outsider status is continually reaffirmed, Padidar’s film foregrounds the sensation of being looked at. Honest, painful, and humorous encounters with three other ‘new comers’ to the Netherlands are stylistically interwoven between Padidar’s own personal history, opening up a vulnerable space of articulation with global resonance. A confessional collage with no simple outs, *All You See* turns the spotlight on all of us, while simultaneously asking who is “us”?

**Awards**
Best Feature Documentary, Dutch Directors Guild, IDFA,
Netherlands, 2022.



## Լուչանո Տորելո

Լուչանո Տորելոն պրոդյուսեր և ռեժիսոր է, ով հիմնականում վավերագրական ֆիլմեր է նկարահանում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սոցիալական ու մշակութային փոփոխություններով պայմանավորված մարդասիրական խնդիրներին: Նա պատկերային պատմասացություն է դասավանդում Ֆոջջայի համալսարանում, իսկ ITS Apulia Digital Maker-ում՝ տեսամոնտաժ: Լուչանոն նաև «Mònde – արահետների կինոփառատոն»-ի գեղարվեստական ղեկավարն է: «Անվախ» վավերագրությունը նրա նոր ռեժիսորական աշխատանքն է:

**Ֆիլմոգրաֆիա**
Իմ կողքին (2014), Ես և Մանֆրեդին (2015), Կոլիբրի (2016), Էրմա (2016), Ամինա (2018), Հավակնոտ մտապատկեր (2018), Ներքին լույսը (2020), Մայրիկ (2022), Անվախ (2023):

**Անվախ/Senza paura**
*Բրազիլիա/Իտալիա/Իսպանիա/Ֆրանսիա, 2023, 77’*
*պորտուգալերեն և իտալերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Լուչանո Տորելո
**Օպերատորներ՝** Լուչանո Տորելո, Պինո Մայորանո
**Արտադրող ընկերություն՝** MAD SRLS

12-ամյա Պիեռֆրանչեսկոն ապրում է Ժերիկոակոարայում և քայթսըրֆինգի ծագող աստղ է: Շուրջ մեկ տասնամյակ շարունակ նկարահանված այս ֆիլմը պատկերում է նրա մանկությունը՝ այն օրվանից, երբ նա առաջին անգամ ջուր է մտնում 3 տարեկանում, մինչև 11 տարեկանը, երբ պատրաստվում է մրցել աշխարհի առաջնությունում, որին մասնակցելու համար պետք է ճամփորդի Բրազիլիայով, Իտալիայով, Իսպանիայով և Ֆրանսիայով հոր հետ, ով նաև նրա մարզիչն է: Նրա խիզախությունը կառերեսվի նրա վախերին:





## Luciano Toriello

Luciano Toriello is a producer and director mainly of documentaries, with a particular interest in humanitarian issues, linked to social and cultural changes. He teaches Visual Storytelling at the University of Foggia and Video editing at the ITS Apulia Digital Maker, and he is also the artistic director of "Mònde - Film Festival on the Paths", winner of the Interreg Europe Best Practices title. The documentary *Fearless* is his latest work as a director.

**Filmography**
Leviteaccanto (2014), Io e Manfredi (2015), Hummingbird (2016),
Erma (2016), Amina (2018), Vision with Ambition (2018),
La luce dentro (2020), Matria (2022), Fearless (2023).

**Fearless/Senza paura**
*Brazil/Italy/Spain/France, 2023, 77'*
*in Portuguese and Italian w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Luciano Toriello
**Cinematographers:** Luciano Toriello, Pino Maiorano
**Production Company:** MAD SRLS

Pierfrancesco lives in Jericoacoara (Brazil) and at 12 he is a rising star of kitesurfing. In ten years of filming, the documentary follows his childhood, from when he takes his first steps in the water at the age of 3 to when, at the age of 11, he will compete in the World Championship that will allow him to travel along Brazil, Italy, Spain, France together with his father, who is also his coach. His courage will meet his fears.

## Անդրեյ Իստրատով



1965 թվականի հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի Նովոսիբիրսկ քաղաքում ծնված Անդրեյ Իստրատովն ավարտել է Մոսկվայի ռադիոմեխանիկայի ուսումնարանը: 1993-ին ավարտել է Գերասիմովի անվան Կինեմատոգրաֆիայի համառուսաստանյան պետական ինստիտուտի (ՎԳԻԿ) ռեժիսորական բաժինը:

**Ֆիլմոգրաֆիա**

Տղաներն ուզում են բանակում ծառայել (1987), Օրորոցային (խաղարկային, 1993), Կատակ. ծիծաղի բաղադրատոմս (2001-2003), Շքանշան ծիծաղի համար (2002), Անցած երկրի շքանշանները (2002), Համամիութենական նշանակության Բաբա Յագա (2003), Համր կինոյի լեգենդները (2003-2004), Երազանքների գործարան (2004), Համաշխարհային կինոյի լեգենդները (2004-2015), Եվգենի Մարգոլիտի ժողովածուն (2010-2015), Կինոյի լեգենդերը (2016-2018), Պայթյունի տեսությունը (2018), Մեկ տիեզերքի պատմություն (2019), Կատարյալ ձև. ֆրակտալների գիտությունը (2020), Երկիր. վերին կետ (2021), Տիեզերական թռիչք. առաքելություն դեպի Մարս (2021), Աստղային օրագրեր. հաղթահարման քրոնիկոն (2021), ԴՖԿՍ. մեկնարկային կետ (4 ֆիլմ, 2022), Կինոռեժիսոր Յուլի Ֆայթ. տրամվայ դեպի մեկ այլ քաղաք (2022), Տիեզերական թռիչք. Յուպիտերի ձգողականությունը (2022), Տիեզերական թռիչք. դեպի արև (2022), Դարաշրջանի կինոլեզուն. Մարլեն Խուցիև (2023):




**Դարաշրջանի կինոլեզուն. Մարլեն Խուցիև/**
**Киноязык эпохи: Марлен Хуциев**

*Ռուսաստան, 2023, 50’*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և պրոդյուսեր՝** Անդրեյ Իստրատով
**Օպերատոր՝** Ալեքսեյ Օրլով
**Մոնտաժողներ՝** Անդրեյ Իստրատով, Նիկոլայ Իստրատով
**Հնչյունավորող՝** Նիկոլայ Իստրատով



Վավերագրական այս ֆիլմը ստեղծվել է խորհրդային կինոյի դասական Մարլեն Խուցիևի գալիք հարյուրամյակի առթիվ: Այն լույս է սփռում վարպետի կյանքի, աշխատանքի ու երազանքների վրա՝ սևեռելով հանդիսատեսի ուշադրությունը Մարլեն Խուցիևի բացառիկ ոճի՝ նրա կինոլեզվի վրա: Եվ հենց կինոլեզվի միջոցով հեղինակները ջանում են ցույց տալ ռեժիսորի ինքնությունը: Ի հակառակ բազում այլ կենսագրական ֆիլմերի՝ տվյալ դեպքում սյուժեի հիմքը ոչ թե կենսապատումն է, այլ սպեցիֆիկ կինոարտահայտչականության և հետևաբար Խուցիևի աշխատանքներում առկա զանազան գաղափարների որոնումներն ու վերլուծությունը:

## Andrey Istratov

Born on October 20, 1965 in Novosibirsk, Russia, Andrey Istratov graduated from the Moscow Radio Mechanical College. In 1993, he graduated from the Gerasimov Institute of Cinematography as a film director.

**Filmography**

Boys Want to Serve in the Army (1987), Lullaby (feature, 1993), Gag – a recipe for laughter (2001-2003), Medal for Laughter (2002), Orders of a Bygone Country (2002), Baba Yaga of All-Union Significance (2003), Legends of Silent Cinema (2003-2004), Dream Factory (2004), Legends of World Cinema (2004-2015), Eugene Margolit's Collection (2010-2015) Legends of Cinema (2016-2018), The Theory of Explosion (2018), The Story of One Universe (2019), Perfect Form: The Science of Fractals (2020), Earth. Top



Point (2021), Space Flight: Mission to Mars (2021), Star Diaries: Chronicle of Overcoming (2021), CSDF: The Point of Reference (4 films, 2022), Film Director Yuli Veit: Tram to Another City (2022), Space Flight: The Attraction of Jupiter (2022), Space Flight: Towards the Sun (2022), The Era of Cinematic Language: Marlen Khutsiev (2023).

**The Era of Cinematic Language: Marlen Khutsiev/**
**Киноязык эпохи: Марлен Хуциев**
*Russia, 2023, 50'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director, Scriptwriter and Producer:** Andrey Istratov
**Cinematographer:** Alexey Orlov
**Editors:** Andrey Istratov, Nikolai Istratov
**Sound:** Nikolai Istratov

This documentary film is made in light of the upcoming centenary of the classic of Soviet cinema, Marlen Khutsiev. The film talks about the life, work and dreams of the master and focuses the viewer's attention on Marlen Khutsiev's unique film style - his cinematic language. And through the cinematic language the authors strive to show the personality of the director. Unlike most biographical films, the core of the plot is not the biography, but the search for and analysis of the formation of specific cinematic techniques and, as a result, the various ideas that are present in Khutsiev's work.



## Տոմա Ջիդիչ

1988 թվականին Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում ծնված Տոմա Ջիդիչը կինոգործիչ է, ով 17 տարվա փորձառություն ունի, ու նաև կինոդասընթացներ է վարում երեխաների համար: Տոման հեղինակել է կարճամետրաժ ու լիամետրաժ ֆիլմեր, երաժշտական տեսահոլովակներ, ինչպես նաև թատերական ռեժիսոր է եղել: Սվետի Իվան Զելինա քաղաքում 2014-2022 թվականներին կազմակերպված «Շեղումներ» կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոնի հիմնադիրն էր: Նաև Kinoklub Zagreb-ի մասնակից է, անդամակցում է Խորվաթիայի սցենարիստների և դրամատուրգների գիլդիային, ինչպես նաև Նյու Յորքում Կինոգործիչների կոոպերատիվին:

**Ֆիլմոգրաֆիա**

Վերջին շունչը (2005), Խնդրաշատ Վերդեր (կարճամետրաժ, 2007),
Հարված (կարճամետրաժ, 2009), Կարուսել (2011),
Վազորդը (համառեժիսոր Պետեր Չերովշեկի ու Նատաշա Չիչայի հետ, 2014), Արտացոլանքներ (2015), Որոնող (2016),
Դեգերումներ օվկիանոսում (2022):

**Դեգերումներ օվկիանոսում/Lutajući oceanom**

*Խորվաթիա/Պորտուգալիա, 2022, 77’*
*անգլերեն և խորվաթերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր՝** Տոմա Ջիդիչ
**Օպերատորներ՝** Աուստեյա Լիուպշևիչիուտե, Տոմա Ջիդիչ
**Պրոդյուսերներ՝** Թերրի Քոստա, Տիագո Կարդոսո, Տոմա Ջիդիչ
**Մոնտաժող՝** Դորոթեա Սերին
**Հնչյունավորողներ՝** Դինիս Էնրիկես, Տիագո Կարդոսո
**Արտադրող ընկերություն՝** MiratecArts

Փակեք աչքերը և շոշափեք մարմինը: Ասես մեդիտացիա լինի: Այս ֆիլմի սյուժեն շատ պարզ է. Ատլանտյան օվկիանոսի կենտրոնում գտնվող պորտուգալական կղզեխմբում՝ շրջակա միջավայրի հետ մեր հակասական հարաբերությունների միջոցով, կայանում է մեր ներքին Տիեզերքի հոգևոր հետազոտությունը: Ճանապարհորդությունն

ուժգնանում է մշտական շարժումով, որը մղում է մեզ կրկին շահելու բնության վստահությունը:

**Պարգևներ**
«Դրագան Ռուբեշա» քննադատների մրցանակ,
Լիբուրնիայի կինոփառատոն, Խորվաթիա, 2022:

## Toma Zidić

Born in Zagreb, Croatia in 1988, Toma Zidić is a filmmaker with 17 years of experience and film educator for kids and youth. He has directed short and feature films, music videos, and theatre. He is the founder of Diversions International Short Film Festival, held in Sveti Ivan Zelina from 2014 to 2022. Member of Kinoklub Zagreb, Croatian Screenwriters and Playwrights Guild, and Filmmaker's Cooperative in New York, USA.

**Filmography**
The Last Breath (2005), Screwed Werder (short fiction, 2007),
Deck-down (short fiction, 2009), Carousel (2011),
The Runner (co-directed with Peter Cerovšek and Nataša Čiča, 2014),
Reflections (2015), Seeker (2016), A Wander into the Ocean (2022).



**A Wander into the Ocean/Lutajući oceanom**
*Croatia/Portugal, 2022, 77'*
*in English and Croatian w/ Arm./Eng. subtitles*

**Director:** Toma Zidić
**Cinematographers:** Austėja Liupševičiūtė, Toma Zidić
**Producers:** Terry Costa, Tiago Cardoso, Toma Zidić
**Editor:** Dorotea Cerin
**Sound:** Dinis Henriques, Tiago Cardoso
**Production Company:** MiratecArts

Close your eyes and feel your body. It feels like meditation. The story is very simple — in the Portuguese archipelago in the middle of the Atlantic Ocean, through our conflicted relationship with the environment, arises the spiritual exploration of our inner Universe. The journey intensifies with the constant movement pushing us to win nature's trust back.

**Awards**
"Dragan Rubeša" Critic's Award, 20th Liburnia Film Festival, Croatia, 2022



## Աքսել Դանիելսոն

1976 թվականին Շվեդիայի Վիտշյովլե քաղաքում ծնված Աքսել Դանիելսոնը կինո է ուսանել Վալանդ ակադեմիայում՝ Գյոթեբորգում, և 2013 թվականին միացել է շվեդական Plattform Produktion կինոընկերությանը: Դրանից ի վեր սերտորեն համագործակցում է Մաքսիմիլիեն Վան Էրթրիքի հետ. իրենք իրենց համատեղ ֆիլմերի ռեժիսորներն են, պրոդյուսերները, օպերատորներն ու մոնտաժողները: Իրենց «Ցատկաշտարակ» կարճամետրաժը 2016-ին ցուցադրվել է Բեռլինալեի կարճամետրաժ ֆիլմերի ծրագրում: «Եվ արքան ասաց՝ որպիսի հրաշք սարք»-ը նրանց դեբյուտային լիամետրաժ ֆիլմն է:

## Մաքսիմիլիեն Վան Էրթրիք

1989 թվականին Փարիզում ծնված Մաքսիմիլիեն Վան Էրթրիքը 2013 թվականից համագործակցում է Աքսել Դանիելսոնի հետ Plattform Produktion կինոընկերության շրջանակում: Ռեժիսորական զույգը նկարահանել է մի շարք կարճամետրաժներ, որոնց պրեմիերաները տեղի են ունեցել այնպիսի կինոփառատոներում, ինչպիսիք են Կաննը, Տորոնտոն, Ասպենը և Սանդենսը: «Ցատկաշտարակ» կարճամետրաժն առաջին անգամ ցուցադրվել է Բեռլինում և արժանացել ավելի քան 30 միջազգային մրցանակի, հայտնվել է 2017 թվականի «Օսկար» մրցանակաբաշխության կարճ ցուցակում և առաջադրվել «Էմմի» մրցանակի:

**Համատեղ ֆիլմոգրաֆիա**
Բանախոսի երկրորդ տեղակալ (2015), Քանզի աշխարհը երբեք դադար չի տալիս (2016), Հավելյալ նյութ (2016), Ցատկաշտարակ (Տասը մետրանոց աշտարակը, 2016), Աշխատատեղեր բոլորի համար (2021), Եվ արքան ասաց՝ որպիսի հրաշք սարք (2023):

**Եվ արքան ասաց՝ որպիսի հրաշք սարք**
*Շվեդիա/Դանիա, 2023, 85′*
*շվեդերեն/անգլերեն/ֆրանսերեն/գերմաներեն/արաբերեն՝*
*հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսորներ, սցենարի հեղինակներ և պրոդյուսերներ՝**
Աքսել Դանիելսոն, Մաքսիմիլիեն Վան Էրթրիք
**Օպերատորներ՝** Աքսել Դանիելսոն, Մաքսիմիլիեն Վան Էրթրիք
**Մոնտաժողներ՝** Միկել Սե Կառլսոն, Աքսել Դանիելսոն, Մաքսիմիլիեն Վան Էրթրիք
**Հնչյունավորողներ՝** Անն Գրի Կրիստիանսեն
**Արտադրող ընկերություններ՝** Bullitt Film Kopenhagen/Film i Väst Trollhättan/Sveriges Television Stockholm

«Եվ արքան ասաց՝ որպիսի հրաշք սարք» ֆիլմը խորասուզում է մեդիամշակույթի հսկայական պատմական օվկիանոս: Կամերա օբսքուրայի ծնունդից մինչև առաջին շարժանկարի ցուցադրումը և վեբքամի գյուտից մինչև առաջին վիրուսային տեսանյութը՝ սրամիտ և մտածելու տեղիք տվող վավերագրական այս ֆիլմն ուսումնասիրում է պատկերների մշակույթի վերելքը: Մեկտեղելով ուրախ ամբոխների առաջ շքերթ անող բռնակալների արխիվային կադրերն արդի սիրողական նկարահանումների հետ, ուղիղ հեռարձակվող կոնտենտը երկնաքերերից կախվող սուր զգացողություններ փնտրողների տեսանյութերի կամ բռնությունն ի ցույց դնող սարսափազդու լրատվական լուսանկարների հետ, ֆիլմը վերածվում է կինոյի և կինոյի ստեղծած սոցիալական պատմության խորհրդանշական հետազոտության: Ի վերջո որո՞նք են մեր ուշադրության համար մրցակցող միլիարդավոր պատկերների ազդեցությանը ենթարկվելու հետևանքները:





## Axel Danielson

Born in Vittskövle, Sweden in 1976, Axel Danielson studied film at the Valand Academy in Gothenburg and joined the Swedish production company Plattform Produktion in 2013. He has been working closely with Maximilien Van Aertryck ever since, both being involved in the creation of their joint films as director/producer and cinematographer/editor. Their short film *Hopptornet* screened in Berlinale Shorts in 2016. *And the King Said, What a Fantastic Machine* is their debut feature-length film.

## Maximilien Van Aertryck

Born in Paris, France in 1989, Maximilien Van Aertryck has collaborated with Axel Danielson as part of the Swedish production company Plattform Produktion since 2013. The pair has made several short films together which premiered at festivals including Cannes, Toronto, Aspen and Sundance. Their film *Hopptornet* screened in the 2016 Berlinale Shorts, won over 30 international awards, was shortlisted for an Oscar in 2017 and was nominated for an Emmy Award.

**Joint filmography**

Second Deputy Speaker (2015),
Because the World Never Stops (2016), Extra Material (2016),
Hopptornet (Ten Meter Tower, 2016), Jobs for All! (2021),
And the King Said, What a Fantastic Machine (2023).



**And the King Said, What a Fantastic Machine**
*Sweden/Denmark, 2023, 85’*
*in Swedish/English/French/German/Arabic w/ Arm./Eng. subtitles*

**Directors, Scriptwriters and Producers:**
Axel Danielson, Maximilien Van Aertryck
**Cinematographers:** Axel Danielson, Maximilien Van Aertryck
**Editors:** Mikel Cee Karlsson, Axel Danielson, Maximilien Van Aertryck
**Sound:** Anne Gry Kristiansen
**Production Companies:** Bullitt Film Kopenhagen/Film i Väst Trollhättan/ Sveriges Television Stockholm

*And the King Said, What a Fantastic Machine* is a plunge into the vast historic ocean of media culture. From the birth of the camera obscura to the screening of the first moving picture and from the invention of the webcam to the first viral video, the witty and thought-provoking documentary chases the rise of image culture as we know it. By collaging historic archive material of great dictators parading in front of cheering crowds with home videos, live-streaming content and clips of thrill-seekers hanging out at the top of a skyscraper, or harrowing press photography exhibiting violence, it offers an emblematic study of cinema and the social history it creates: What are the implications of being exposed to the billions of images competing for our attention?



## Լյուք Մաքմանուս

Լյուք Մաքմանուսը ռեժիսոր և պրոդյուսեր է Դուբլինից: Նա տարբեր ծնաչափերի նախագծեր է իրականացրել NBC-ի, Netflix-ի, RTÉ-ի, Virgin Media Television-ի, TG4-ի, NDR/ARD-ի, Al Jazeera-ի և Channel 4-ի համար՝ արժանանալով Իռլանդիայի կինոյի և հեռուստատեսության ակադեմիայի 4 մրցանակի, Կելտական մեդիամրցանակի և Ռադիարք մրցանակի: Որպես պրոդյուսեր՝ նրա դեբյուտային լիամետրաժ ֆիլմը «Թոմաս Ռեյդի միայնակ պայքարն» էր, որի պրեմիերան տեղի ունեցավ 2018 թվականին՝ IDFA-ի Գլխավոր մրցույթում՝ այնուհետ Իռլանդիայի կինոյի և հեռուստատեսության մրցանակաբաշխությանը ճանաչվելով լավագույն լիամետրաժ վավերագրություն և արժանանալով Դուբլինի միջազգային կինոփառատոնի «Լավագույն իռլանդական ֆիլմ» պարգևին: «Հյուսիսային օղակաձևը» նրա առաջին լիամետրաժ ռեժիսորական աշխատանքն է:

**Ֆիլմոգրաֆիա**
«Հյուսիսային օղակաձևը» (2022):

**Հյուսիսային օղակաձևը/North Circular**
*Իռլանդիա, 2022, 80’*
*անգլերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Լյուք Մաքմանուս
**Օպերատորներ՝** Փադի Ջորդան, Ռիչարդ Քենդրիք,
Էվան Բարի, Ջեյմի Գոլդրիք, Լյուք Մաքմանուս
**Պրոդյուսերներ՝** Էլեյն Գալահեր, Լյուկ Մաքմանուս
**Մոնտաժող՝** Ջոն Մըրֆի
**Երաժշտական ձևավորումը՝** Քևին Մըրֆի, Թոմաս Հո

«Հյուսիսային օղակաձևը» երաժշտական կինովավերագրություն է, որը դիտողին ուղևորության է տանում Դուբլինի Հյուսիսային օղակաձև ճանապարհի երկայնքով՝ Ֆենիքս Փարքից Դուբլինի նավահանգիստ, բացահայտելով պատմությունը, երաժշտությունը և



տրամադրությունները մի փողոցի, որը մեկտեղում է երկրի ամենասիրված ու տխրահռչակ վայրերից մի քանիսը:

**Պարգևներ**
Հատուկ հիշատակում, Վավերագրական մրցույթ, Դուբլինի ՄԿՓ, 2022; Լավագույն վավերագրություն, Լութի ՄԿՓ, 2022; Հատուկ հիշատակում, Վավերագրական դասակարգ, IndieCork ԿՓ, 2022; «IndieCork-ի ոգի» մրցանակ, 2022; Գլխավոր մրցանակ, Երաժշտական վավերագրությունների մրցույթ, FIPADOC, 2023; American Cinematographer («Ամերիկյան օպերատոր») ամսագրի մրցանակ, Սալեմի ԿՓ, 2023; «Լավագույն էկրանային ձայն» մրցանակ, «Thin Line» փառատոն, 2023:

## Luke McManus

Luke McManus is a director and producer based in Dublin. He has produced and directed award-winning projects for NBC, Netflix, RTÉ, Virgin Media Television, TG4, NDR/ARD, Al Jazeera and Channel 4, winning four IFTAs, one Celtic Media Award and the Radharc Award in the process. His debut feature as producer was *The Lonely Battle of Thomas Reid*, which premiered in the Main Competition at IDFA in 2018, won the George Morrison Award for Best Feature Documentary at the Irish Film & Television Awards and the Best Irish Film Award at the Dublin International Film Festival. *North Circular* is his debut feature documentary as a director.





**Filmography**
North Circular (2022).

**North Circular**
*Ireland, 2022, 80'*
*in English w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Luke McManus
**Cinematographers:** Paddy Jordan, Richard Kendrick, Evan Barry, Jamie Goldrick, Luke McManus
**Producers:** Elaine Gallagher, Luke McManus
**Editor:** John Murphy
**Sound:** Ross Carew, Gregory Dunn, Hugh Fox, Steve Power, Tony Crosse
**Music Score:** Kevin Murphy, Thomas Haugh

*North Circular* is a documentary musical that travels the length of Dublin's North Circular Road, from the Phoenix Park to Dublin Port, exploring the history, music and streetscapes of a street that links some of the country's most beloved and infamous places.

**Awards**
Special Mention, Documentary Competition, Dublin IFF, 2022; Best Documentary, Louth International Film Festival, 2022; Special Mention, Documentary category, IndieCork FF, 2022; Spirit of IndieCork Award, 2022; Grand Prix, Music Documentary Competition, FIPADOC, 2023; *American Cinematographer* Magazine Award, Salem Film Fest, 2023; Best Sound on Screen Award, Thin Line Fest, 2023.

## Էնջի Վինչիտո
Էնջի Վինչիտոն անանուն կինոգործիչների կոլեկտիվ է:

**Մանիֆեստ/Манифест**
*Ռուսաստան, 2022, 68'*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և պրոդյուսեր՝** Էնջի Վինչիտո

Երեխաները մեր ապագան են: Սիրողական նկարահանումներից մոնտաժված այս ֆիլմը բաղկացած է հաճախ շատ շոկային տեսանյութերից, որոնք ռուս դեռահասները հրապարակում են սոցիալական կայքերում: Յութուբյան կամ տիկտոկյան անմեղ առավոտյան ծեսերի կողքին տեսնում ենք դպրոցում կրակոցներից խուճապի մատնված երիտասարդների կադրեր: Եվ երկրի տարբեր ծայրերում աշակերտները թաքուն նկարում են նյարդային ուսուցիչներին, ովքեր բռնության են դիմում: Բջջային հեռախոսն ասես վահան է դառնում երիտասարդների և այս դաժան աշխարհի միջև՝ նրանց վերածելով ոչ միայն դիտորդների, այլև մեղադրողների: Անկախ նրանից, թե ինչպիսի ծայրահեղ իրավիճակներ են ստեղծվում, իրենք շարունակում են նկարահանել: «Մանիֆեստը» մռայլ խճանկար է, որը մտահոգիչ պատկեր է ներկայացնում՝ գագաթնակետին հասնելով սարսափազդու ավարտում: Ֆիլմը ցույց է տալիս, թե ինչպես է ագրեսիան և ճնշումը ակամա փոխանցվում գալիք սերունդներին:

**Պարգևներ**
Լավագույն ֆիլմ, «Envision» մրցույթ, Ամստերդամի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոն (IDFA), Նիդերլանդներ, 2022:




## Angie Vinchito
Angie Vinchito is a filmmaking collective, made up of anonymous members.

**Manifesto/Манифест**
*Russia, 2022, 68'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*



**Director, scriptwriter and producer:** Angie Vinchito

Children are our future. This found footage film is composed entirely of often-shocking videos that Russian teenagers have posted on social media. Innocent morning rituals on YouTube or TikTok have been placed next to shots of panicking young people fleeing school shooters. And students all over Russia are apparently secretly recording images of violent teachers who can’t keep their hands to themselves. The mobile phone forms a kind of shield between the young people and this brutal world, turning them into not only observers but also accusers. However extreme the events, they keep filming. *Manifesto* is a dark mosaic, cumulatively disturbing, and culminating in a horrifying ending. The film shows how aggression and oppression are unwittingly passed on to the next generation.

**Awards**
Best Film Award, Envision Competition, IDFA, Netherlands, 2022.



## Ռոբին Դիմե

Ռոբին Դիմեն կինո է ուսանել Փարիզ VIII համալսարանում՝ այնուհետ ընդունվելով Կինեմատոգրաֆիայի համառուսաստանյան պետական ինստիտուտ (ՎԳԻԿ): Վարժ ռուսերեն է խոսում, 15 տարի անց է կացրել նախկին ԽՍՀՄ-ում: Նա ֆիլմեր է նկարել Մոսկվայից Սիբիր, ռուսաստանյան հեռուստատեսությունում հանդես է եկել որպես սցենարիստ, կինոդրամատուրգիայի ուսուցիչ է եղել, Ղազախստանում կինոփառատոնի գեղարվեստական ղեկավար և ռուսալեզու վավերագրական ֆիլմերի օպերատոր: «Սամիի ոդիսականները» նրա առաջին լիամետրաժ ֆիլմն է:

**Ֆիլմոգրաֆիա**
Հոգու ճայները (2014), Ça tourne ap (կարճամետրաժ, 2016),
Գիշերային կայարան (կարճամետրաժ, 2016),
Սամիի ոդիսականները (2022):

**Սամիի ոդիսականները/Les Odyssées de Sami**
*Ֆրանսիա, 2022, 70’*
*ամհարերեն և անգլերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և օպերատոր՝** Ռոբին Դիմե
**Պրոդյուսեր՝** Կանտան Լորան
**Մոնտաժողներ՝** Մաուրիսիո Երաս, Սանդրա Ախ
**Հնչյունավորողներ՝** Լյուդովիկ Էլիաս, Մարի Ավերտի
**Արտադրող ընկերություն՝** Les Films de l’œil sauvage
**Համարտադրող՝** Carthage Films

Եթովպիայի լաբիրինթոսային մայրաքաղաք Ադիս Աբեբայում Սամին երկար 19 տարի է նվիրել հին նոութբուքի օգնությամբ հունական և հռոմեական առասպելներն ամհարերեն՝ Եթովպիայի պաշտոնական լեզվով թարգմանելու առաքելությանը: Ռեժիսորը հետևում է մի մարդու, ով հետապնդում է իր անբացատրելի երազանքները՝ ծառայելով գրականությանը: Տարիների մենակյաց աշխատանքից հետո կհաջողվի՞ նրան արդյոք հրատարակել իր ձեռագրերն արդի Եթովպիայում: Այս ֆիլմն իսկական գոհար է գրքասերների համար:



## Robin Dimet

Robin Dimet studied cinema at the University of Paris VIII before joining the National Institute of Cinematography in Russia (VGIK). Fluent in Russian, he spent fifteen years in the former USSR. He has directed documentaries from Moscow to Siberia, has been a scriptwriter for Russian television, a trainer for scriptwriting residencies, artistic director of a film festival in Kazakhstan and cinematographer for Russian-language documentaries. *Sami´s Odysseys* is his first feature.

**Filmography**
Sounds of the Soul (2014), Ça tourne ap (short, 2016),
Gare de nuit (short, 2016), Sami's Odysseys (2022).

**Sami's Odysseys/Les Odyssées de Sami**
*France, 2022, 70'*
*in Amharic and English w/ Arm./Eng. subtitles*

**Director, Scriptwriter and Cinematographer:** Robin Dimet
**Producer:** Quentin Laurent
**Editors:** Mauricio Lleras, Sandra Ach
**Sound:** Ludovic Elias, Marie Averty
**Production Company:** Les Films de l'œil sauvage
**Co-production:** Carthage Films

In Ethiopia's labyrinthine capital Addis Ababa, Sami spent long 19 years to translate Greek and Roman myths on an ancient laptop to Amharic, the Ethiopian official language. The director follows a man pursuing his inexplicable dreams in the service of literature. After years of solitary labor, will he succeed in getting his manuscript published in modern-day Ethiopia? A true bibliophile's gem of a film.



## Կիրիլ Զախարով

Կիրիլ Զախարովը ռեժիսոր է, մոնտաժող և թատրոնի ու կինոյի դերասան: 1999-2003 թվականներին սովորել է Բելառուսի Արվեստների պետական ակադեմիայում (Լիդյա Մոնակովայի արվեստանոց): 2014-2015 թվականներին հաճախել է Սցենարիստների ու ռեժիսորների բարձրագույն դասընթացները (Իրակլի Կվիրիկաձեի և Անդրեյ Դոբրովոլսկու արվեստանոց): 2014 թվականից ի վեր ռեժիսոր և մոտնաժող է ռուսաստանյան ՎԳՏՐԿ «Կուլտուրա» հեռուստաալիքում: 2019-ից ի վեր դերասանական վարպետություն է դասավանդում ԳԻՏԻՍ-ում (Թատերարվեստի ռուսաստանյան ինստիտուտ):

**Ֆիլմոգրաֆիա**
Վլադիմիր (2014), Ճանապարհ դեպի ինքդ քեզ (2014),
Տեսարաններ ծովի մոտ (2015), «Սպիտակ գվարդիա». վեպի ծնունդը (2019),
Քոլին Ռոսս. սատանու ուսուցիչը (2023):

**Քոլին Ռոսս. սատանու ուսուցիչը/Колин Росс – Учитель дьявола**
*Ռուսաստան, 2023, 70’*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*




**Ռեժիսոր՝** Կիրիլ Զախարով
**Սցենարի հեղինակ՝** Անդրեյ Շեմյակին
**Պրոդյուսեր՝** Աննա Գոլիկովա
**Օպերատոր՝** Մարկ Կելիմ
**Մոնտաժող՝** Կիրիլ Զախարով
**Արտադրող ընկերություն՝** Անդրեյ Շեմյակինի ստուդիա

Այս կինոէսսեն նվիրված է գերմանացի կինովավերագրող Քոլին Ռոսսին, որ ծնվել է 1885 թվականի հունիսի 4-ին և ինքնասպան է եղել 1945 թվականի ապրիլի 29-ին: Նա լուսավորիչ էր, ճամփորդ, բեղուն գրող և չափազանց հանրաճանաչ լրագրող. երկար ժամանակ կինոն ընդհանրապես մեր հերոսի տեսադաշտում չէր: Զգուշորեն ուսումնասիրելով նրա հետքերն ու վերհիշելով նրա կենսագրության ընտրովի փխրուն փաստերը՝ նրա ֆիլմերը,

հեղինակները նախևառաջ կփորձեն պատասխանել հետևյալ հարցին՝ ինչո՞ւ է կինոյի պատմության այս իսկապես բացառիկ ֆիգուրի շուրջ արդեն 7 տասնամյակ շարունակ ոչ պաշտոնական լռության դավադրություն հյուսվում:

## Kirill Zaharov

Kiril Zaharov is a director, editor and an actor of both stage and screen. In 1999-2003, he studied at the Belarusian State Academy of Arts (class of Lidia Monakova). In 2014-2015, he attended the Higher Courses for Scriptwriters and Directors (class of Irakli Kvirikadze and Andrey Dobrovolsky). Since 2017, he works as a director and editor at the TV channel Culture VGTRK Russia 1. Since 2019, he teaches acting in GITIS (Russian Institute of Theatre Arts)

**Filmography**
Vladimir (2014), The Road to Yourself (2014),
Scenes by the Sea (2015), "White Guard" – The Birth of a Novel (2019),
Colin Ross – The Devil's Teacher (2023).

**Colin Ross – The Devil's Teacher/Колин Росс – Учитель дьявола**
*Russia, 2023, 70'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director**: Kiril Zaharov
**Scriptwriter:** Andrey Shemyakin
**Producer:** Anna Golikova
**Cinematographer:** Mark Kelim
**Editor:** Kiril Zaharov
**Production Company:** Shemyakin՝s Film Company

The film-essay is dedicated to the German documentary filmmaker Colin Ross, who was born on June 4, 1885 and committed suicide on April 29, 1945. Enlightener, traveler, prolific writer and a very popular journalist: for a long time, cinema was not the main area of our hero's interest. By carefully tracing his footsteps and remembering the selectively fragile facts of his biography – his films, we will, first and foremost, try to answer the question: why has there been a seemingly unofficial conspiracy of silence around this undoubtedly unique figure for seven decades now?



# Կարճամետրաժ ֆիլմերի մրցույթ

# Short film competition



## Մանուել Մունյոզ Ռիվաս

Մանուել Մունյոզ Ռիվասն իսպանացի կինոգործիչ է: Իր անձնական կինոնախագծերից զատ՝ գործընկերների հետ սցենարներ է համահեղինակում և մոնտաժում է նրանց ֆիլմերը: Նրա առաջին խաղարկային ֆիլմը՝ «Ծովը հեռվից մեզ է նայում», առաջին անգամ ցուցադրվել է Բեռլինալեի «Ֆորում» բաժնում, այնուհետ՝ բազում այլ կինոփառատոներում: Նրա կարճամետրաժ «Քամու հետ» կինոնկարի պրեմիերան կայացել է Օբերհաուզենի կարճամետրաժ ֆիլմերի փառատոնում:

**Ֆիլմոգրաֆիա**
Արահետ (2008), Քամու հետ (2009), Թռչուն (2014),
Ծովը հեռվից մեզ է նայում (2017), Աքերոն (2023):

**Աքերոն/Aqueronte**
*Իսպանիա, 2023, 26’*
*իսպաներեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Մանուել Մունյոզ Ռիվաս
**Օպերատորներ՝** Մաուրո Էրսե, Մանուել Մունյոզ Ռիվաս
**Պրոդյուսեր՝** Մանուել Մունյոզ Ռիվաս
**Մոնտաժող՝** Մանուել Մունյոզ Ռիվաս

Լաստանավի վրա մի քանի ուղևոր հատում է գետը մեկ ափից մյուսը: Նրանցից ոմանք տոգորվում են լռությամբ և ուսումնասիրում անծանոթ նավակիցներին կամ մտորում բացվող տեսարանների շուրջ: Ոմանք զրուցում են, թերևս որպեսզի աշխուժացնեն ճամփորդությունն ու ժամանակ սպանեն: Ջրային ուղևորությունն ասես երկարաձգվում է, նշանակետը՝ հեռանում, և տարածությունն անորոշ է դառնում: Միակ հստակ բանը թերևս հենց շարժումն է:

## Manuel Muñoz Rivas

Manuel Muñoz Rivas is a filmmaker based in Spain. He alternates his personal film projects with co-writing and editing films for colleagues. His first



feature film *El mar nos mira de lejos* (*The Sea Stares at Us from Afar*) was premiered in 2017 at Berlinale, in the Forum Section, and was shown at several international film festivals. His short film *Con el viento* (*With the Wind*) premiered at the Oberhausen International Short Film Festival.

**Filmography**
Sendero (2008), Con el viento (2009), Pájaro (2014),
El mar nos mira de lejos (2017), Aqueronte (2023).

**Aqueronte**
*Spain, 2023, 26'*
*in Spanish w/ Arm./Eng. subtitles*

**Director and scriptwriter:** Manuel Muñoz Rivas
**Cinematographers:** Mauro Herce,
Manuel Muñoz Rivas
**Producer:** Manuel Muñoz Rivas
**Editor:** Manuel Muñoz Rivas

On board a ferry, a series of passengers cross a river from one riverbank to the other. Some of the travelers wrap themselves in silence and observe the unfamiliar fellow travelers or contemplate the scenery. Others chat, perhaps to liven up the voyage and speed up time. The journey on the waters seems to expand, the destination shore is postponed, and the magnitude of space is blurred. Motion itself is perhaps the only certainty.





## Կյարա Ֆաջյոնատո

Կյարա Ֆաջյոնատոն միջդիսցիպլինար արվեստագետ է, որ գործունեություն է ծավալում վիդեոարտի, կինոյի և հանրային տարածքներում արվեստի ասպարեզներում: Ապրում է Բեռլինում, որտեղ հաճախել է Արվեստների համալսարանի (UdK) մագիստրոսական ծրագիրը: Նրա աշխատանքները ցուցադրվել են միջազգային հարթակներում՝ ցուցահանդեսներում և փառատոներում, և բազմիցս պարգևատրվել են: Ի լրումն սրան՝ Կյարան տարբեր հաստատությունների հետ կոնկրետ նախագծերի շրջանակում որպես լուսանկարիչ և ռեժիսոր աշխատելու մեծ փորձ ունի:

**Ֆիլմոգրաֆիա**
Տառեղներ (2014), Դաշտերի դևերը (2019), Այավ Ք'իյ (2021):

**Դաշտերի դևերը/I diavoli dei campi**
*Իտալիա, 2019, 13'*
*իտալերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Կյարա Ֆաջյոնատո
**Պրոդյուսերներ՝** Կյարա Ֆաջյոնատո, Մարինա Ռեստա, Ջուլիո Տոդեսկան
**Օպերատոր՝** Կյարա Ֆաջյոնատո
**Մոնտաժող՝** Կյարա Ֆաջյոնատո
**Հնչյունավորող՝** Կյարա Ֆաջյոնատո
**Արտադրող ընկերություն՝** LIES – Laboratorio dell'inchiesta economica e sociale

Տոնի Կարտան (1928-2014) մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել գյուղական ընտանիքում: Գյուղական կյանքի ռիթմերով և գույներով հմայվածությունը կստիպի նրան արտահայտել դրանք պատկերներով ու խորհրդանիշներով իր գլխավոր կոչման՝ գեղանկարչության միջոցով: 16 տարեկանից ի վեր նա աշխատում էր որպես բանվոր Վերանորոգումների գրասենյակում, որը Ֆերովերիի՝ Վիչենզայի թաղամասերից մեկի հիմնասյունն էր: Կերպարանքները, որ անցնում են նրա կտավներով, մեզ ուղեկցում են մի ճանապարհորդության, որը լույս է սփռում գյուղական մշակույթի մայրամուտի հանգամանքներին:

Խաղաղ հեռավոր Կոնտրա Ռիվա Ալտա գյուղը փոխակերպվում է Ֆերովերիի՝ կապիտալիստական արդյունաբերական հասարակու-թյան բանվորական եռանդուն արվարձանային զավակի:



## Chiara Faggionato

Chiara Faggionato is an interdisciplinary artist, working in the field of video art, film and art in public space. She lives in Berlin, where she studied at the Master of Arts program of the Art in Context Institute at the Universität der Künste - UdK. Her artworks have been showcased internationally at exhibitions and festivals, where they were multiply awarded. Additionally, Chiara has extensive experience collaborating with institutions project-based, as a photographer, filmmaker and director.

**Filmography**
Ardeidae (2014), Devils of the Fields (2019), Ajaw Q’ij (2021).

**Devils of the Fields/I diavoli dei campi**
*Italy, 2019, 13’*
*in Italian w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Chiara Faggionato
**Producers:** Chiara Faggionato, Marina Resta, Giulio Todescan
**Cinematographer:** Chiara Faggionato
**Editor:** Chiara Faggionato
**Sound:** Chiara Faggionato
**Production Company:** LIES – Laboratorio dell’inchiesta economica e sociale

Toni Carta (1928-2014) spends his childhood and adolescence growing up in a peasant family. His fascination with the rhythms and colors of rural life will lead him to convey images and symbols of it via his main vocation: painting. From the age of 16, he works as a laborer at the Officine Grandi Riparazioni, the pillar of *Ferrovieri*, a district of Vicenza. The suspended characters that pass through his paintings accompany us on a journey that illuminates us about the sunset of rural culture. The quiet countryside village Contra’ Riva Alta will become *I Ferrovieri*, a bustling working-class suburb son of the capitalist industrial society.



## Ռեզա Ակբարեան Գալշեկլաի

Ռեզա Ակբարեան Գալշեկլաին իրանցի կինոռեժիսոր է, ով վերջին 15 տարիներին ակտիվ գործունեություն է ծավալում վավերագրական կինոյի ասպարեզում:

**Ֆիլմոգրաֆիա**
Իրենք տարան հոտը, Կրիա, Սիմորղյան սիմֆոնիա,
Սիմորղի հրաշալի վերադարձը:

**Կրիա/** لاکپشت
*Իրան, 2022, 12’*
*խոսք չկա*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և պրոդյուսեր՝**
Ռեզա Ակբարեան Գալշեկլաի
**Օպերատոր՝** Ռեզա Ակբարեան Գալշեկլաի
**Մոնտաժող՝** Ռեզա Ակբարեան Գալշեկլաի
**Հնչյունավորող՝** Հասան Մահդավի
**Արտադրող ընկերություն՝**
Նեմա բե նեմա մշակութային և արվեստի ինստիտուտ

Մի կրիա ընկնում է Կասպից ծովի ձկնորսների ցանցերը և աներևակայելի ջանքերով փորձում է ազատվել այս թակարդից:



## Reza Akbarian Galsheklai

Reza Akbarian Galsheklai is an Iranian film director, who has been active in various roles in documentary filmmaking in the past 15 years.

**Filmography**
They Took the Herd, Turtle, Simorgh Symphony,
The Wonderful Return of the Simorgh.

**Turtle/ تشپکال**
*Iran, 2022, 12'*
*no dialogue*

**Director, Scriptwriter and Producer:**
Reza Akbarian Galsheklai
**Cinematographer:** Reza Akbarian Galsheklai
**Editor:** Reza Akbarian Galsheklai
**Sound:** Hassan Mahdavi
**Production Company:**
Nema Be Nema Cultural and Art Institute

A turtle is trapped in the net of anglers of the lagoon, as she attempts to save herself from this predicament with unimaginable struggle.





## Սի. Էս. Նիքոլսոն

Սի. Էս. Նիքոլսոնը ծնունդով բրիտանացի կինոգործիչ է, որն ապրում է Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում: Փիլիսոփայության և սոցիալական մարդաբանության բակալավր լինելուց զատ՝ նաև կինո և հեռուստարտադրություն է ուսանել Վեսթմինսթերի համալսարանում, և շուրջ 15 տարի աշխատել է հեռուստատեսությունում որպես ռեժիսոր, պրոդյուսեր և մոնտաժող: «Հայտնաբերողներին հայտնաբերողը» նրա դեբյուտային կինովավերագրությունն է:

**Ֆիլմոգրաֆիա**
Հայտնաբերողներին հայտնաբերողը (2022):

**Հայտնաբերողներին հայտնաբերողը/Mɛ E Mɔn Nǔmɔntɔ́ Lɛɛ É**
*Նորվեգիա, 2022, 25’*
*ֆոնգբե՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Սի. Էս. Նիքոլսոն
**Օպերատոր՝** Պեդեր Բրատերուդ
**Պրոդյուսեր՝** Սի. Էս. Նիքոլսոն
**Մոնտաժող՝** Պեդեր Բրատերուդ
**Հնչյունավորող՝** Աննա Նիլսոն
**Արտադրող ընկերություն՝** APSELUTELY FɅKT Films

Արևմտյան Աֆրիկայում՝ Բենինի Հանրապետությունում մի ընտանիք եվրոպացի կինոգործիչներին պատմում է, թե ինչպես իրենց նախնիներն առաջին անգամ հանդիպեցին եվրոպացիներին: Թե ինչպես որսորդ Կպատեն պորտուգալական նավ տեսավ 1548 թվականին ու թե ինչպես դրդեց ճամփորդներին ափ իջնել: Մենք տեսնում ենք, թե ինչպես է այս հանդիպումը ոգեկոչվում ծեսերում, և մի քանի թերևս ապշեցուցիչ կարծիք ենք լսում պատմության այս շրջադարձային պահի մասին: Բայց արդյո՞ք պատմական այս իրադարձություններն ավելի խորը զննման կարիք ունեն: Որքանո՞վ կարող ենք վստահել սպիտակամորթ ռեժիսորի հայացքին: Եվ ինչպե՞ս են միմյանց ընկալում հերոսներն ու նկարահանող խումբն ատլանտյան ստրկավաճառության, գաղութատիրության և գլոբալիզմի մեկնարկից 500 տարի անց: Կարճամետրաժ

վավերագրական այս ֆիլմը հայացք է նետում նրան, թե պատմությունը որքանով է բանաասացություն, և թե ինչպես հպարտությունն ու խիղճը կարող են ազդել մեր հավաքական հիշողության վրա:



## C.S. Nicholson

C.S. Nicholson is a British-Norwegian filmmaker based in Oslo, Norway. Aside from a BA in Philosophy & Social Anthropology, he holds a BA in Film & TV Production from the University of Westminster, and has worked as director, story producer and editor for 15 years, mainly in TV. *The Discoverer of the Discoverers* is his directorial debut in cinematic documentary.

**Filmography**
The Discoverer of the Discoverers (2022).

**The Discoverer of the Discoverers/Mɛ E Mɔn Nǔmɔntɔ́ Lɛɛ É**
*Norway, 2022, 25'*
*in Fongbè w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** C.S. Nicholson
**Cinematographer:** Peder Bratterud
**Producer:** C.S. Nicholson
**Editor:** Peder Bratterud
**Sound:** Anna Nilsson
**Production Company:** APSELUTELY FⱯKT Films

A family in the West African republic of Benin tell their version of an ancestors' first encounter with Europeans—to a European film crew: how the hunter Kpatè eyed a Portuguese ship off the Atlantic coast in 1548, and how he induced the explorers to come ashore. We are allowed a peek into how this encounter is still remembered ritually, and get to hear some perhaps astonishing views on this turning point in history. But do all the claims about the historic event bear a closer look? To which degree can we trust the filmmaker's white gaze? And how do the characters and the film crew relate to one another, 500 years after the onset of the Atlantic Slave Trade, colonialism and globalism? This short documentary gives a glimpse into the way in which history is storytelling, and how pride and conscience may affect collective memories.



## Աշոտ Մկրտչյան

1957 թվականին ծնված Աշոտ Մկրտչյանը 1980-1985 թվականներին ուսանել է Կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտում (ВГИК):
1985-1999 թվականներին «Հայֆիլմ» և «Հայկ» ստուդիաներում աշխատել է որպես բեմադրող օպերատոր: 2000-ին հիմնել է «Անկախ ֆիլմարտադրողներ» (IF) կինոընկերությունը, որը գործում է առայսօր:

**Ֆիլմոգրաֆիա**
NON-STOP (1995), Ձմեռային մեղեդի (1995),
Հայաստան (1996), Գեղարդ (1999), Seven Indian Boys (2007),
Ավետիս (2010), Լինել ուրիշ (2013), Նույն երկնքի տակ (2014),
Երուսաղեմ, Երուսաղեմ (2015), Օրիջին (2016), Ձին (2022):



**Ձին**
*Հայաստան, 2022, 38'*
*հայերեն՝ անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և պրոդյուսեր՝**
Աշոտ Մկրտչյան
**Օպերատոր՝** Աշոտ Մկրտչյան
**Մոնտաժող՝** Աշոտ Մկրտչյան
**Հնչյունավորող՝** Աշոտ Մկրտչյան
**Արտադրող ընկերություն՝**
IF (Independent Filmmakers)

Ոգեշնչվելով Արմեն-Արխե Խեչումյանի «Ձին» բանաստեղծությունից՝ գեղանկարիչ Ալիկ Ասատրյանը ստեղծում է կտավների մի շարք՝ նվիրված 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմին:




## Ashot Mkrtchyan

Born in 1957, Ashot Mkrtchyan attended the All-Union Institute of Filmmaking (VGIK) in Moscow from 1980 to 1985. In 1985-1999, he worked as a cinematographer at Armenia's Hayfilm studio and Hayk studio of documentary films. In 2000, he founded the company IF (Independent Filmmakers), which continues to produce films to this day.

**Filmography**
Non-Stop (1995), Winter Melody (1995),
Armenia (1996), Geghard (1999), Seven Indian Boys (2007),
Avetis (2010), Being Different (2013), Under the Same Heaven (2014),
Jerusalem, Jerusalem… (2015), Origines (2016), The Horse (2022).

**The Horse/Ձին**
*Armenia, 2022, 38'*
*in Armenian w/ Eng. subtitles*

**Director, Scriptwriter and Producer:** Ashot Mkrtchyan
**Cinematographer:** Ashot Mkrtchyan
**Editor:** Ashot Mkrtchyan
**Sound:** Ashot Mkrtchyan
**Production Company:** IF (Independent Filmmakers)

Inspired by the poem *The Horse* by Armen-Arkhe Khechumyan, painter Alik Assatrian creates a series of canvases dedicated to the 2020 War in Artsakh (Nagorno-Karabakh).



## Արման Այվազյան

Ծնվել է 1994-ին Երևանում: 2016-ին ավարտել է Հայկական մանկավարժական համալսարանի կինոռեժիսուրայի ֆակուլտետը: Հետագայում՝ 2022-ին, ավարտել է նաև Կինեմատոգրաֆիայի համառուսաստանյան պետական ինստիտուտի ոչ խաղարկային ֆիլմերի ռեժիսուրայի բաժինը: Այժմ աշխատում է Հայաստանում որպես վավերագրական ֆիլմերի ռեժիսոր: Նրա աշխատանքները ցուցադրվել են մի շարք կինոփառատոներում, այդ թվում՝ Սևաստոպոլի «Արծաթե ստավրիդ» ԿՓ-ում (2022, լավագույն ռեժիսոր), Ավեցցանոյի ոսկե կարճամետրաժ ֆիլմերի ԿՓ-ում (2022), Պրահայի միջազգային կինոմրցանակաբաշխությունում և Սանկտ Պետերբուրգի «Պատուհան դեպի Եվրոպա» ԿՓ-ում:

**Ֆիլմոգրաֆիա**
Ճայը (2021), Քարեր (2022):

**Ճայը/Чайка**
*Ռուսաստան/Հայաստան, 2021, 14'*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր՝** Արման Այվազյան
**Սցենարի հեղինակներ՝**
Արման Այվազյան, Անդրեյ Բուտուզով
**Օպերատոր՝** Արման Այվազյան
**Պրոդյուսեր՝** Արման Այվազյան
**Մոնտաժող՝** Արման Այվազյան
**Արտադրող ընկերություն՝** ՎԳԻԿ

Սա պատմություն է արվեստագետի մասին, որին վիճակված չէր արվեստագետ դառնալ: Սա պատմություն է հոր մասին, որը պատմում է որդին: Սա պատմություն է ծովի և ազատության մասին:



## Arman Ayvazyan

Born in 1994 in Yerevan, Armenia, Arman Ayvazyan graduated from the Armenian Pedagogical Institute in 2016 with a focus in film directing. He later attended the All-Russian State University of Cinematography named after Sergei Gerasimov (VGIK), which he graduated in 2022 with a specialization in the department of non-fiction films directing. Arman now works as a documentary filmmaker in Armenia and has seen his work showcased at a number of film festivals, including the Silver Scad Film Festival (Sevastopol, 2022 Winner: Best Director), the Golden Short Film Festival (Avezzano, 2022), the Prague International Film Awards and the “Window to Europe” Film Festival (St. Petersburg).

**Filmography**
The Gull (2021), Stones (2022).

**The Gull/Чайка**
*Russia/Armenia, 2021, 14’*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director:** Arman Ayvazyan
**Scriptwriters:** Arman Ayvazyan, Andrey Butuzov
**Cinematographer:** Arman Ayvazyan
**Producer:** Arman Ayvazyan
**Editor:** Arman Ayvazyan
**Production Company:** VGIK

This is a story about an artist who was not destined to become an artist. This is a story about a father told by a son. This is a story about the sea and about freedom.



## Պեյման Ալիպուր

1975 թվականին արևմտյան Իրանի Սարդաշտ քաղաքում ծնված Պեյման Ալիպուրը ռեժիսոր է, անիմատոր, պատկերազարդող և ծաղրանկարիչ: Անիմացիոն ռեժիսուրա է ուսանել Թեհրանի արվեստների համալսարանում: Այժմ ապրում է Իրանի Մահաբադ քաղաքում:

**Ֆիլմոգրաֆիա**
Սառը պատերազմ (2000),
Նեղ սիրտ (2005),
Ես չգիտեմ իմ տան ճամփան (2006),
Որտեղ մեռնում են քամիները (2022):

**Որտեղ մեռնում են քամիները**
*Իրան, 2022, 12’*
*քրդերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Պեյման Ալիպուր
**Անիմատորներ՝** Պեյման Ալիպուր,
Մարզիե Մայսամի Ազադ




**Պրոդյուսեր՝** Պեյման Ալիպուր
**Մոնտաժող՝** Պեյման Ալիպուր
**Հնչյունավորող՝** Մեհրշադ Մալեքութի

Սարդաշտը քրդական քաղաք է Իրանի արևմուտքում: Այն աշխարհում առաջին բնակավայրն էր, որ դարձավ քիմիական զենքի կիրառման զոհ, երբ 1987 թվականի հունիսի 28-ին՝ ժամը 16:15-ին ռմբակոծության ենթարկվեց իրաքյան զորքերի կողմից: Այս ֆիլմը պատմում է ռմբակոծությունից առաջ և հետո տեղի ունեցածի, սիրեկանների մի զույգի և ի վերջո՝ հետպատերազմական հետևանքների մասին:



## Pejman Alipour

Born in 1975 in Sardasht, West Iran, Pejman Alipour is a director, animator, illustrator and cartoonist. He has an MA in Directing Animation from the Tehran Art University. Currently, he lives in Mahabad, Iran.

**Filmography**
Cold War (2000), Small Heart (2005),
I Don't Know the Way To My House (2006),
Where the Winds Die (2022).

**Where the Winds Die**
*Iran, 2022, 12'*
*in Kurdish w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Pejman Alipour
**Animators:** Pejman Alipour, Marzieh Maysami Azad
**Producer:** Pejman Alipour
**Editor:** Pejman Alipour
**Sound:** Mehrshad Malekooti

Sardasht is a Kurdish city in the West of Iran. It is the first city in the world to be a victim of chemical weapons after being bombed with mustard gas at 4:15 p.m. on Sunday, June 28$^{th}$, 1987. This film is about the before and after of the bombing, a romantic relationship between a couple and finally the effects of the post-war.



## Անաստասիա Շուբինա և Տիմոֆեյ Գլինին

Անաստասիա Շուբինան և Տիմոֆեյ Գլինինը միջդիսցիպլինար արվեստագետներ են, որոնք գործունեություն են ծավալում վավերագրական և փորձարարական կինոյի, վիդեոարտի, լուսանկարչության ու պերֆորմանսի ասպարեզներում: 2018 թվականից ի վեր միասին են ստեղծագործում: Այժմ ապրում են ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաքում:
Անաստասիա Շուբինան ծնունդով Սանկտ Պետերբուրգից է և կինոռեժիսուրա է սովորել Սանկտ Պետերբուրգի Նոր կինոյի դպրոցում, լուսանկարչություն է ուսանել «Դոկդոկդոկ» արդի լուսանկարչության դպրոցում և փիլիսոփայություն՝ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում: Նրա ֆիլմերը ցուցադրվել են մի շարք միջազգային կինոփառատոներում և արժանացել պարգևների: Նրա լուսանկարչական նախագծերը ներկայացվել են անհատական և խմբային ցուցահանդեսներում, հաղթել են միջազգային մրցույթներում և հրատարակվել են լուսանկարչական ամսագրերում և առցանց հարթակներում: Իր անձնական նախագծերում Անաստասիան ուսումնասիրում է դիցաբանությունը, մարդաբանությունը և պատմական տրավմաների թեման:
Տիմոֆեյ Գլինինը նույնպես ծնունդով Սանկտ Պետերբուրգից է և կինոռեժիսուրա է ուսանել Սանկտ Պետերբուրգի Նոր կինոյի դպրոցում և կենսաբանություն՝ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում: Նա անկախ կինոգործիչ և լուսանկարիչ է: Նրա կինոաշխատանքները ցուցադրվել են բազում կինոփառատոներում և արժանացել են մրցանակների, իսկ լուսանկարչական նախագծերը ներկայացվել են անհատական և խմբային մի շարք ցուցահանդեսներում: Մի քանի գիտական-արվեստային պերֆորմանսների հեղինակ է: Իր անձնական նախագծերում Տիմոֆեյն ուսումնասիրում է մշակութային բարքերը, ազգագրությունն ու արդի գիտությունը:

**Ֆիլմոգրաֆիա**
Տեղափոխություններ (2019),
Մասնատվելու արվեստը (2019),
Պիբլոկտո (2023)։

**Պիբլոկտո/Piblokto**
*Ռուսաստան/ԱՄՆ, 2023, 38’*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսորներ և սցենարի հեղինակներ՝**
Անաստասիա Շուբինա,
Տիմոֆեյ Գլինին
**Օպերատորներ՝** Անաստասիա Շուբինա, Տիմոֆեյ Գլինին
**Պրոդյուսեր՝** Տիմոֆեյ Գլինին
**Մոնտաժողներ՝** Անաստասիա Շուբինա, Տիմոֆեյ Գլինին
**Հնչյունավորող՝** Իլյա Դունաև
**Արտադրող ընկերություն՝** Rhizome films

Սառուցյալ օվկիանոսի ափին՝ Չուկոտկայում, աշխարհից կտրված մի ժողովուրդ է ապրում։ Նրանց կյանքը պարուրվում է ծովացլերի ու կետերի որսի և տունդրայից եկող արջերից գյուղերը պաշտպանելու շուրջ։ Այս թեման ֆիլմը վերածում է մահվան շուրջ մտորումների։ Ծովային կենդանիները դառնում են մարդկանց սննդի հիմնական աղբյուրը, կենդանիների մնացորդներն օգտագործվում են մորթիների ագարակում արկտիկական աղվեսներին կերակրելու համար, մարդկանց գերեզմանոցները դառնում են արջերի թիրախ։ Ըստ երևույթին, այս շրջանի բոլոր բնակիչներն էլ սննդի և մահվան ցիկլի ակտիվ մասնակիցներ են։ Ֆիլմը հեռանում է կինոյի տիպիկ ռիթմիկ կառուցվածքից և փոխարենը որդեգրում է շամանական ծեսի ձևը, որն իմաստ ձևավորող միջոցառում է հյուսիսային ժողովուրդների համար։




**Պարգևներ**
Կալանավորների մրցանակ,
«Իրականության կինո»,
Փարիզ, Ֆրանսիա, 2023։



## Anastasia Shubina and Timofey Glinin

Anastasia Shubina and Timofey Glinin are multidisciplinary artists working in various media – documentary and experimental film, video art, photography and performance. They work together from 2018. They are currently based in San Francisco, USA. Anastasia Shubina is a visual artist from Saint Petersburg, who studied film directing at the St. Petersburg School of New Cinema, photography at Docdocdoc School of Modern Photography and philosophy at Saint Petersburg State University. Her films were shown at a number of international film festivals and won awards. Her photographic projects were presented at solo and group exhibitions, won international competitions and were published in photographic magazines and online platforms. In her personal projects, Anastasia explores the themes of mythology, anthropology and historical trauma. Timofey Glinin is a multidisciplinary artist form Saint Petersburg, he studied film directing at St. Petersburg School of New Cinema and science (biology) at Saint Petersburg State University. He is an independent filmmaker and photographer. His works were presented on a number of international film festivals and won awards, while his photo projects were shown at solo and group exhibitions. He is an author of a number of science art performances. In his personal projects, Timofey explores the themes of cultural practices, ethnography and modern science.

**Filmography**

Dislocations (2019), The Art of Falling Apart (2019), Piblokto (2023).

**Piblokto**

*Russia/USA, 2023, 38'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*



**Directors and Scriptwriters:**
Anastasia Shubina, Timofey Glinin
**Cinematographers:**
Anastasia Shubina, Timofey Glinin
**Producer:** Timofey Glinin
**Editors:** Anastasia Shubina, Timofey Glinin
**Sound:** Ilya Dunaev
**Production Company:** Rhizome films

On the Arctic Ocean coast of Chukotka live a people cut off from the world. Their life revolves around hunting walruses and whales and protecting villages from bears coming from the tundra. This theme turns the film into a reflection on death. Marine animals become the primary source of food for the people, animal leftovers are used to feed arctic foxes on a fur farm, human cemeteries become targets for bears. It appears that all the inhabitants of this region are involved in the cycle of food and death. The film departs from the typical rhythmic structure of cinema and instead adopts the structure of a shamanic ritual, which is a meaning-forming event for the northern peoples.

**Award**
Inmate Award, Cinéma du Réel, Paris, France, 2023.



## Ռուհոլա Ակբարի

1976 թվականին Իլամի մարզում ծնված Ռուհոլա Ակբարին իրանցի կինոռեժիսոր է: Որպես պրոդյուսեր և ռեժիսոր ստեղծել է բազմաթիվ վավերագրական և խաղարկային ֆիլմեր և արժանացել է մի շարք իրանական և միջազգային կինոփառատոների պարգևներին:

**Ֆիլմոգրաֆիա**
**Խաղարկային.**
Ես Շիրինն եմ, Կմախք, Տուբերոզներ, Հանայի համար:
**Ոչ խաղարկային.** Ջալիլը և Խալիլը, Քոչվոր աղջիկ, Էմիլիան և...

**Քոչվոր աղջիկ**
*Իրան, 2021, 22’*
*ֆարսի/քրդերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Ռուհոլա Ակբարի
**Օպերատոր՝** Որիյա Գոլզարեան
**Պրոդյուսերներ՝** Ռուհոլա Ակբարի, Ֆաթեմե Մոհսենի
**Մոնտաժող՝** Կամրան Ջահեդի
**Հնչյունավորող՝** Հասան Մահդավի, Պեժման Ռաժ
**Արտադրող ընկերություններ՝** IRIB/ILAM CENTER

«Քոչվոր աղջիկը» Ֆիլմը պատմում է քոչվորական ցեղերից մեկին պատկանող մի աղջկա մասին, ով չնայած աղջիկների մարզվելն արգելող բոլոր ավանդույթների ու սովորույթների պատճառով առաջացող խոչընդոտներին՝ հաջողություններ է գրանցում քիքբոքսինգում: Նա փորձում է այլ աղջիկներին համոզել և խրախուսել գալ մարզանքներին քոչվորական «սև վրանում»:

## Ruhollah Akbari

Born in 1976 in the Ilam province, Ruhollah Akbari is an Iranian director. He has produced and directed many documentary and feature films and gained several prizes from Iranian and international film festivals.



**Filmography**
**Features:** I am Shirin, Skeleton, Tuberoses, For Hana.
**Documentaries:** Jalil & Khalil, Nomad Girl, Emilia and...

**Nomad girl**
*Iran, 2021, 22'*
*in Farsi/Kurdish w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Ruhollah Akbari
**Cinematographer:** Woriya Golzarian
**Producers:** Ruhollah Akbari,
Fatemeh Mohseni
**Editor:** Kamran Jahedi
**Sound:** Hasan Mahdavi, Pezhman Razh
**Production Company:** IRIB/ILAM CENTER

*Nomad Girl* follows the daughter of one of the nomadic tribes, who, despite all the problems caused by the traditions and common beliefs about girls exercising, achieves much success in kickboxing. She tries to persuade the families of the girls in the area and encourage them to attend training classes in a nomad "black tent".





## Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ

1989 թվականին Չիլիի Պունտա Արենաս քաղաքում ծնված Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզը կինո է ուսանել Կինոյի և հեռուստատեսության միջազգային դպրոցում՝ Կուբայի Սան Անտոնիո դե լոս Բանյոս քաղաքում, և հաճախել է փարիզյան Ատելյե Վարան կինոգործիչների համայնքի կազմակերպած վավերագրական կինոյի դասընթացներին: Նա համահեղինակել է «Պրոպագանդա» (2014) և «Աստված» (2019) վավերագրությունները, որոնք ներկայացվել և պարգևատրվել են Նիոնի կինոփառատոնում: 2020 թվականին նա ավարտել է «Մարիա Կ.» կարճամետրաժը, որի համաշխարհային պրեմիերան կայացել է փարիզյան «Իրականության կինո» փառատոնի մրցույթում և արժանացել է Հանդիսատեսի մրցանակին, իսկ այնուհետ՝ Սանտյագոյի վավերագրական կինոյի միջազգային փառատոնի (FIDOCS) ժյուրիի հատուկ հիշատակմանը: Նրա ֆիլմերն ընդգրկվել են Լիսաբոնի, Յամագատայի, Մար դել Պլատայի, Ֆլորենցիայի Ժողովուրդների և բազում այլ կինոփառատոների ծրագրերում:

**Ֆիլմոգրաֆիա**
Պրոպագանդա (համառեժիսոր, 2014),
Աստված (համառեժիսոր, 2019), Մարիա Կ. (2020),
Ֆանտասմագորիա (2020):

**Ֆանտասմագորիա/Fantasmagoría**
*Չիլի/Շվեյցարիա/Ֆրանսիա, 2022, 14'*
*իսպաներեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր՝** Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ
**Սցենարի հեղինակներ՝** Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ, Մարիանա Կամեյո
**Օպերատոր՝** Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ
**Պրոդյուսեր՝** Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ
**Մոնտաժող՝** Խուան Ֆրանցիսկո Գոնզալեզ



**Հնչյունավորող՝** Դիեգո Ագուիլար
**Արտադրող ընկերություններ՝** Ecran Mobile/DOCLA

Ատակամա անապատի կենտրոնում են գտնվում նիտրատային արդյունաբերության վերջին մնացորդները: Աշխարհի ամենաչոր վայրում ապրող մարդիկ վկայում են, թե ինչպես է աստիճանաբար մի ամբողջ ոլորտ կործանվում:

**Պարգևներ**
Ազգային վավերագրական ժյուրիի Հատուկ մրցանակ,
Ռենգոյի միջազգային կինոփառատոն, Չիլի, 2022;
Լավագույն կարճամետրաժ փորձարարական ֆիլմ,
ICARO Կենտրոնական Ամերիկայում միջազգային կինոփառատոն,
Գվատեմալա, 2022:

**Juan Francisco González**
Born in 1989 in Punta Arenas, Chile, Juan Francisco González studied film at the EICTV (San Antonio de los Baños) and the Ateliers Varan, Paris. He co-directed the documentaries *Propaganda* (2014) and *Dios* (2019), which were featured and awarded at Visions du Réel. In 2020, he finished the short film *Maria K*, which had its world premiere at Cinéma du Réel in the Première Fenêtre Compétition and received the Public Award and a Special Mention from the Jury in FIDOCS (2020). Among others, his films have been programmed at DocLisboa, Popoli, Yamagata, Mar del Plata.





**Filmography**
Propaganda (co-director, 2014),
Dios (co-director, 2019), Maria K. (2020),
Fantasmagoría (2022).

**Fantasmagoría**
*Chile/Switzerland/France, 2022, 14'*
*in Spanish w/ Arm./Eng. subtitles*

**Director:** Juan Francisco González
**Scriptwriters:** Juan Francisco González, Mariana Camelio
**Cinematographer:** Juan Francisco González
**Producer:** Juan Francisco González
**Editor:** Juan Francisco González
**Sound:** Diego Aguilar
**Production Company:** Ecran Mobile/DOCLA

In the middle of the Atacama Desert, vestiges of the last nitrate industry are found, while the residents witness the crash of an industry located in the driest place on Earth.

**Awards**
Special Prize of the National Documentary Jury, 18th FECIR Rengo International Film Festival, Chile, 2022; Best International Experimental Short Film Competition, 25th ICARO International Film Festival in Central America, Guatemala, 2022.



Հայ կինո

100

Armenian Cinema




## Համո Բեկնազարյան

Ծնվել է 1892 թվականի մայիսի 31-ին Երևանում: 1912-ին ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: 1913-ին փոխադրվել է Մոսկվայի կոմերցիոն ինստիտուտ, որն ավարտել է 1918-ին: 1914-ին սկսել է նկարահանվել ֆիլմերում և շատ շուտով դարձել ռուսական նախահեղափոխական կինոյի աստղ: 1921-ին Գեորգի Գոգետիձեի հետ միասին Բեկնազարյանը հիմնադրեց Վրաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից կինոյի բաժինը: 1923-ին կինոյի բաժինը վերածվեց Վրաստանի պետկինոյի, որի առաջին ղեկավարն ու գեղարվեստական խորհրդատուն Բեկնազարյանն էր: Նույն թվականին նկարահանեց իր դեբյուտային ֆիլմը՝ «Անարգանքի սյան մոտ կամ Հայրասպանը»: Վրաստանում արել է ևս երկու ֆիլմ՝ «Կորսված գանձերը» (1924) և «Նաթելլա» (1925): 1925 թվականին Հայաստանի Ժողկոմխորհի հրավերով տեղափոխվել է Հայաստան և ստեղծել առաջին հայկական խաղարկային կինոնկարը՝ «Նամուսը»: Բեկնազարյանը «Արմենֆիլմ» կինոստուդիայի գեղարվեստական ղեկավարն էր ընդհուպ մինչև 1951 թվականը: 1926-ին էկրաններ բարձրացավ Բեկնազարյանի «Զարե»-ն՝ պատմության մեջ եզդիների մասին պատմող առաջին ֆիլմը: Նույն թվականին նաև նկարեց առաջին հայկական կինոկատակերգությունը՝ «Շոր և Շորշոր»: 1935-ին Բեկնազարյանը ստեղծեց առաջին հայկական հնչյունային ֆիլմը՝ «Պեպո»-ն:

1927-ին Բեկնազարյանի նախաձեռնությամբ Մոսկվայում բացվեց «Վոստոկֆիլմ» կինոստուդիան, որը նպատակ ուներ ֆիլմեր արտադրելու ԽՍՀՄ տարածքում բնակվող փոքր ժողովուրդների մասին: 1930-1931 թվականներին Բեկնազարյանն ստեղծեց երկու ֆիլմ նանայցիների մասին՝ խաղարկային «Իգդեմբու»-ն և վավերագրական «Գոլդերի երկիրը»: Այնուհետև նկարեց խաղարկային «Շքանշանով մարդը» չեչենների ամենօրյա կենցաղի մասին: Զանազան փոքր ազգերի կյանքի ու կենցաղի պատկերումը շատ բնութագրական է Բեկնազարյանի արվեստի համար:

Համո Բեկնազարյանը մահացել է 1965 թվականի ապրիլի 27-ին Մոսկվայում: Նրա արվեստը մեծ հաշվով կանխորոշել է հայ կինոյի հետագա զարգացումները, գեղարվեստական յուրօրինակությունն ու բնութագրական հատկանիշները:

**Երկիր Նաիրի**
*Հայաստանի ԽՍՀ, 1930, 60'*
*համր ֆիլմ*

**Սցենարի հեղինակ և ռեժիսոր՝** Համո Բեկնազարյան
**Օպերատոր՝** Գարուշ Բեկնազարյան
**Արտադրող ընկերություն՝** Հայֆիլմ

Վավերագրական և բեմադրված կադրերը համատեղող այս ֆիլմը նվիրված է Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման 10-ամյակին և ցույց է տալիս դժվարություններն ու խոչընդոտները, որ երիտասարդ երկիրը ստիպված էր հաղթահարել կայացման ուղու վրա:

## Hamo Beknazaryan

Born on May 31, 1892 in Yerevan. In 1912, got admitted to the Moscow University Faculty of Law. In 1913, he transferred to the Moscow Commercial Institute, which he graduated in 1918. In 1914, he began appearing in



movies and shortly after became a popular actor of pre-revolutionary Russian cinema. In 1921, along with Georgi Gogetidze Beknazaryan founded the Film Department adjacent to the Georgian People's Commissariat of Enlightenment. In 1923, the Film Department was reformed and became Georgia's State Film Production Company. Beknazaryan was its first chairman and artistic director. The same year he made his film debut with *Patricide*. Later he made two more films in Georgia – *The Lost Treasure* (1924) and *Natella* (1925). In 1925, the Committee of People's Commissars of Armenia invited Beknazaryan to make the first Armenian feature film *Namus*. In 1926, Beknazaryan moved to Yerevan and continued to be the artistic director of "Armenfilm" studio up until 1951. In 1926, Beknazaryan made the very first film in history about the Yazidi people called *Zare*. The same year he also wrote and directed the first Armenian comedy *Shor and Shorshor*. In 1935, Beknazaryan directed the first Armenian sound film *Pepo* (with music by Aram Khachaturyan).
In 1927 at Beknazaryan's initiative, a studio called "Vostokfilm" (East film) was founded in Moscow, which was specifically created to produce films about the smaller nations of the USSR. In 1930-1931 Beknazaryan made two films for the studio about the life of the Nanai people – the feature film *Igdembu* and the documentary *The Land of Golds*. He also made the feature film *The Man with the Medal* about the everyday life of the Chechen people. The depiction of life and culture of various (especially smaller) nations is quite typical for Beknazaryan.
Hamo Beknazaryan died April 27, 1965 in Moscow. In many respects, Hamo Beknazaryan's body of work predetermined the evolution of Armenian cinema, its artistic qualities and distinct features.

**The Land of Nairi**/Երկիր Նաիրի
*Armenian SSR, 1930, 60'*
*silent film*

**Director and Scriptwriter:** Hamo Beknazaryan
**Cinematographer:** Garush Beknazaryan
**Production Company:** Hayfilm Studio

This film, combining actual documentary and staged footage, is dedicated to the 10th anniversary of the establishment of Soviet rule in Armenia and shows the difficulties and obstacles that the young country had to overcome on its way to a better tomorrow.



## Սերգեյ Փարաջանով

Սերգեյ Փարաջանովը ծնվել է 1924 թվականի հունվարի 9-ին Թբիլիսիում: Կինոքննադատների, կինոպատմաբանների և կինոգործիչների կողմից դիտվելով որպես կինոյի պատմության մեծագույն և ամենաազդեցիկ կինոգործիչներից մեկը՝ Փարաջանովը կինո է ուսանել Մոսկվայի ՎԳԻԿ-ում և իր դեբյուտային «Անդրիեշ» ֆիլմը նկարահանել է 1954 թվականին: Ուկրաինայում «Մոռացված նախնիների ստվերները» (1965) նկարահանելուց հետո Փարաջանովը միջազգայնորեն դասվեց կինոարվեստի առաջատար դեմքերի շարքին: Հայաստանում ստեղծված «Նռան գույնը» (1969) համարվում է նրա գերագույն գլուխգործոցը: 1987 թվականին նրա «Սուրամի ամրոցի լեգենդը» ֆիլմն արժանացել է Ռոտերդամի միջազգային կինոփառատոնի մրցանակին՝ ամենանորարար ֆիլմի համար: Փարաջանովյան գեղագիտությունը հակասության մեջ էր մտնում խորհրդային պատկերացումների հետ, ինչը հանգեցրեց նրան, որ նրա նախագծերից շատերը մերժվեցին կինոստուդիաների կողմից և ի վերջո նրան ձերբակալեցին կեղծ մեղադրանքներով: 1974 թվականին նա դատապարտվեց 5 տարվա ազատազրկման ուկրաինական բանտում: Սրան հետևեց միջազգային բողոքի ալիքն այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսիք էին Տրյուֆոն, Բունյուելը, Պազոլինին և Անտոնիոնին: Փարաջանովյան ստեղծագործությունների մի մասը՝ կոլաժները, նկարները, ստեղծվել են ազատազրկման տարիներին: Փարաջանովի վերջին ավարտուն խաղարկայինը «Աշուղ Ղարիբն» էր (1988), որը ցուցադրվեց Վենետիկում և Նյու Յորքում և արժանացավ Եվրոպական կինոակադեմիայի մրցանակին: Փարաջանովը կյանքից հեռացավ 1990 թվականին:



**Հակոբ Հովնաթանյան**
*Հայաստանի ԽՍՀ, 1967, 10'*
*ոչ մի երկխոսություն*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Սերգեյ Փարաջանով
**Օպերատոր՝** Կարեն Մեսյան
**Կոմպոզիտոր՝** Ստեփան Շաքարյան
**Արտադրող ընկերություն՝** Հայֆիլմ

Այս կարճ 10 րոպեանոց ֆիլմում Սերգեյ Փարաջանովը վերստեղծում է 19-րդ դարի Թբիլիսիի տրամադրություններն ու մթնոլորտը Հակոբ Հովնաթանյանի՝ «թիֆլիսյան Ռաֆայելի» կտավների միջոցով: Համատեղելով Հովնաթանյանի գեղանկարները քաղաքային պատկերների ու հնչյունների հետ՝ Փարաջանովի այս ֆիլմը կարող է դիտվել որպես նրա գլուխգործոց «Նռան գույնը» կինոնկարի նախագուշակ:

## Sergei Parajanov

Sergei Parajanov was born on January 9, 1924 in Tbilisi. Regarded by film critics, film historians and filmmakers to be one of the greatest and most influential filmmakers in cinema history, Parajanov studied film at VGIK in Moscow and made his debut in 1954 with the film *Andriesh*. After directing *Shadows of Forgotten Ancestors* (1965) in Ukraine, Parajanov became internationally recognized as a leading figure in cinema. *The Color of Pomegranates* (1968), made in Armenia, is considered his ultimate masterpiece. In 1987, his film *The Legend of Suram Fortress* received the IFFR Rotterdam Award for the Most Innovative Film. Parajanov was aesthetically opposed to Soviet norms, which led to many of his projects being rejected by film



studios and eventually to his arrest on falsified charges. He was sentenced to 5 years in a Ukrainian prison in 1974. A wave of international protests by the likes of Truffaut, Buñuel, Pasolini and Antonioni followed. Many of Parajanov's art works – assemblages, collages, drawings – were created during his imprisonment. The last feature Parajanov completed was *Ashik Kerib* (1988), selected by Venice and New York, which won the European Film Academy Award (European Director). Parajanov passed away in 1990.

**Hakob Hovnatanian/Հակոբ Հովնաթանյան**
*Armenian SSR, 1967, 10'*
*no dialogue*

**Director and Scriptwriter:** Sergey Parajanov
**Cinematographer:** Karen Mesyan
**Composer:** Stepan Shakaryan
**Production Company:** Hayfilm Studio

In this 10 minute short, Sergei Parajanov recreates the feel and atmosphere of 19th century Tbilisi through the paintings of Hakob Hovnatanian, the 'Raphael of Tiflis'. Combining sights and sounds from both Hovnatanyan's paintings and the city itself, Parajanov's short documentary can be seen as a direct precursor to *The Color of Pomegranates* (1969), his masterpiece.



## Ռուբեն Գևորգյանց

Ծնվել է 1945 թվականի նոյեմբերի 30-ին կինոռեժիսոր Ստեփան Կևորկովի ընտանիքում: 1962-1964թթ. եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայում կինոմեխանիկի օգնական և ռեժիսորի օգնական՝ հայկական հեռուստատեսությունում: 1969-ին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսուրայի բաժինը (Վ. Աճեմյանի արվեստանոց): 1969-1971 թվականներին «Երևան» հեռուստաֆիլմերի ստուդիայի ռեժիսոր է եղել: 1971-ից աշխատել է Հայաստանի քրոնիկալ-վավերագրական ֆիլմերի ստուդիայում (այսօր՝ «Հայկ» կինոստուդիա): 1968-ին նկարահանել է իր առաջին վավերագրական՝ «Ներսիսյանցիները», 1977-ին՝ առաջին խաղարկային կարճամետրաժ՝ «Վերադարձի ճամփան», և 1983-ին՝ առաջին խաղարկային լիամետրաժ՝ «Գիշերվա մեջ առկայծող կրակը» կինոնկարները: 1982-ից «Հայֆիլմ»-ի վավերագրական ֆիլմերի ստեղծագործական միավորման

գեղարվեստական ղեկավարն էր, իսկ 1989-ից՝ այդ միավորման հիման վրա ստեղծված «Հայկ» կինոստուդիայի գեղարվեստական ղեկավարն ու խորհրդի նախագահը: 2004-2017 թվականներին եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ: Հայաստանի ժողովրդական արտիստ է: Գևորգյանցի ֆիլմերը բազմիցս արժանացել են միջազգային կինոփառատոների մրցանակների: Մահացել է 2017 թվականին:

## Ruben Gevorgyants

Born November 30, 1945 in the family of Armenian film director Stephan Kevorkov. In 1962-1964 he was a movie mechanics assistant in Hayfilm studio and a directors assistant in Armenian television. In 1969, he graduated from the Yerevan Institute of Fine Arts and Theatre's Faculty of Directing. In 1969-1971, he worked in the Yerevan Studio of Telefilms. Since 1971, he worked in the Armenian Chronicle–Documentary Film Studio (called "Hayk" studio today). In 1968, he made his first documentary *Graduates of the Nersessian School*, in 1977 – his first feature short *The Way Back* and in 1983 – his first feature length film *Fire Sparkling in the Night*. Since 1982, he was the artistic director of "Hayfilm" studio's Creative Association of Documentary Films and in 1989, he became the chairman of "Hayk" film studio, which was founded on the basis of that Association. In 2004-2017 Gevorgyants was the President of the Armenian Union of Film Professionals. He is a People's Artist of Armenia. His films have won numerous awards in many international film festivals. Gevorgyants passed away in 2017.



**Կապույտ քամին և բուրմունքը նուշի**
*Հայաստանի ԽՍՀ, 1978, 10'*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր՝** Ռուբեն Գևորգյանց
**Սցենարի հեղինակ՝** Ստեփան Կևորկով
**Օպերատոր՝** Յուրի Բաբախանյան
**Արտադրող ընկերություն՝** ՎՖՀՍ (Վավերագրական ֆիլմերի հայկական ստուդիա)

Կինոէսսե, որը պատկերում է նկարչուհի Գայանե Խաչատրյանի ստեղծագործական գործընթացը:

**The Blue Wind and the Scent of Almonds/Կապույտ քամին և բուրմունքը նուշի**
*Armenian SSR, 1978, 10'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director:** Ruben Gevorgyants
**Scriptwriter:** Stepan Kevorkov
**Cinematographer:** Yuri Babakhanyan
**Production Company:** ASDF (Armenian Studio of Documentary Films)

A cinematic essay, conveying the creative process of painter Gayane Khachatryan.



**Բարի հետք**
*Հայաստանի ԽՍՀ, 1980, 10'*
*խոսք չկա*

**Ռեժիսոր՝** Ռուբեն Գևորգյանց
**Սցենարի հեղինակ՝** Էմանվել Մանուկյան
**Օպերատոր՝** Յուրի Բաբախանյան
**Արտադրող ընկերություն՝** Երևանի վավերագրական ֆիլմերի ստուդիա

Ֆիլմը երևանյան մի ծերունու մասին է, ով նկարում է ավտոտնակների վրա՝ ժանգոտ մետաղյա պատերը վերածելով ծաղկուն բնապատկերների:

**A Kind Trace/Բարի հետք**
*Armenian SSR, 1980, 10'*
*no dialogue*

**Director:** Ruben Gevorgyants
**Scriptwriter:** Emanvel Manukyan
**Cinematographer:** Yuri Babakhanyan
**Production Company:** Yerevan Documentary Films Studio

The film is about a Yerevan oddball who paints on garages and turns their cold rusty tin walls into flowering landscapes.



**Աշխարհումս**
*Հայաստանի ԽՍՀ, 1989, 10’*
*խոսք չկա*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Ռուբեն Գևորգյանց
**Օպերատոր՝** Յուրի Բաբախանյան
**Արտադրող ընկերություն՝** ՎՖՀՍ (Վավերագրական ֆիլմերի հայկական ստուդիա)

Կինոէսսե, որ պատկերում է մի քանի ակնթարթ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի կյանքի վերջին տասնամյակից՝ 1978-ին բանտից ազատումից մինչև մահը։

**In My World/Աշխարհումս**
*Armenian SSR, 1989, 10’*
*no dialogue*

**Director and Scriptwriter:** Ruben Gevorgyants
**Cinematographer:** Yuri Babakhanyan
**Production Company:** ASDF (Armenian Studio of Documentary Films)

A cinematic essay depicting a few moments from the last decade of renowned filmmaker Sergey Parajanov’s life from his release from prison in 1978 to his death.

## Հարություն Խաչատրյան



Ծնվել է 1955 թվականի հունվարի 9-ին Ախալքալաքում (Վրաստան): 1981-ին ավարտել է Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի բաժնի կինոռեժիսուրայի ֆակուլտետը (Յուրի Երզնկյանի արվեստանոց): Սովորելու հետ մեկտեղ աշխատում էր «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես օպերատոր Ալբերտ Յավուրյանի օգնական: Ուսումն ավարտելուց հետո շարունակել է աշխատանքը կինոստուդիայում՝ սկզբից որպես օպերատորի օգնական, այնուհետև որպես ռեժիսորի օգնական, երկրորդ ռեժիսոր, իսկ 1985-ից սկսած նկարահանում է սեփական ֆիլմերը: 1991-ին հիմնադրել է «Դեբյուտ» կինոփառատոնը: 1993-1994 թվականներին աշխատել է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում որպես մշակույթի և կրթության բաժնի ղեկավար: 2004-ին Միքայել Ստամբոլցյանի և Սուսաննա Հարությունյանի հետ հիմնադրել է «Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոնը և դարձել վերջինիս տնօրեն: 2013-ին ստացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում: Հարություն Խաչատրյանը բազմաթիվ միջազգային կինոփառատոների դափնեկիր է: 2017 թվականից ի վեր Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահն է:

**Սպիտակ քաղաք**
*Հայաստանի ԽՍՀ, 1988, 37’*
*խոսք չկա*

**Ռեժիսոր՝** Հարություն Խաչատրյան
**Սցենարի հեղինակներ՝** Հարություն Խաչատրյան, Միքայել Ստամբոլցյան
**Օպերատոր՝** Արմեն Միրաքյան
**Հնչյունավորող՝** Անահիտ Կեսայան
**Արտադրող ընկերություն՝** Հայֆիլմ

Ֆիլմում պատկերված է Ախալքալաքը՝ Վրաստանի գավառական հայկական քաղաքը, որը ներկայանում է մեզ որպես սովետական հասարակության մերթ կատակերգական, մերթ ողբերգական մոդել:



## Harutyun Khachatryan

Born January 9, 1955 in Akhalkalaki, Georgia. In 1981, he graduated from the Directing Faculty of the Armenian Pedagogical Institute's Culture Department (Yuri Yerzinkyan's workshop). While studying he was also working at "Hayfilm" studio as an assistant to cinematographer Albert Yavuryan. After graduation, he continued working in the studio first as an assistant cinematographer, assistant director, second director and finally in 1985 he began making his own films, which have gained wide international acclaim since. In 1991, he founded the Debut Film Festival. In 1993-1994. he was working in the Ministry of Foreign Affairs of Armenia as the head of the Culture and Education Department. In 2004, he founded the "Golden Apricot" Yerevan IFF with Mikayel Stamboltsyan and Susanna Harutyunyan and became its director. In 2013, he became a People's Artist of Armenia. Through the years, Khachatryan's films have won numerous prizes at many international film festivals. Since 2017, he is the president of the Armenian Union of Film Professionals.

**White Town/Սպիտակ քաղաք**
*Armenian SSR, 1988, 37'*
*no dialogue*

**Director:** Haruyun Khachatryan
**Scriptwriters:** Harutyun Khachatryan, Mikayel Stamboltsyan
**Cinematographer:** Armen Mirakyan
**Sound:** Anahit Kesayan
**Production Company:** Hayfilm Studio

The film depicts the Armenian town of Akhalkalaki in provincial Georgia, which is presented as both a comic and tragic model of Soviet society.

## Գարեգին Զաքոյան



Ծնվել է 1947 թվականի ապրիլի 5-ին Երևանում: 1976-ին Լենինգրադում պաշտպանել է «Հայկական համր կինոն» ատենախոսությունը և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1973-1985 թվականներին աշխատել է Հայաստանի ԳԱ Արվեստի ինստիտուտում իբրև գիտաշխատող, իսկ 1985-1991 թվականներին՝ իբրև կինոյի և հեռուստատեսության բաժնի վարիչ: Շուրջ 300 հրապարակումների, այդ թվում՝ «Հայկական համր կինոն» (Երևան, 1976) ու «Կինոն և լեզուն» (Երևան,1989) գրքերի հեղինակն է: 1991-ին հիմնադրել է Հայաստանի ազգային ֆիլմադարանը, որի տնօրենն է եղել մինչև 1998 թվականը: Որպես ռեժիսոր նկարահանել է մեկ տասնյակից ավելի ոչ խաղարկային կինոնկար, այդ թվում՝ «Կալանավայրերի արվեստը» (1998), «Քաջարան. քարի մետամորֆոզը» (2001) և «Իմ Ռայշոֆենը» (2023):

## Գենադի Մելքոնյան



Ծնվել է 1944 թվականի օգոստոսի 12-ին Երևանում: 1962-1964 թվականներին աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում իբրև լուսավորող: 1965-ին ընդունվել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետ, որն ավարտել է 1969-ին: Մինչև 1979-ն աշխատել է «Հայֆիլմ»-ում որպես ռեժիսորի օգնական և երկրորդ ռեժիսոր: 1979-ին նկարահանել է իր դեբյուտային «Թթենի» կարճամետրաժ ֆիլմը: Նույն թվականին դարձել է ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության անդամ: Եղել է շուրջ մեկ տասնյակ ֆիլմերի ռեժիսոր և/կամ սցենարիստ, այդ



թվում՝ «Վերջին կիրակին» (1985) և «Օդապարուկի օրը» (1986): 1998-ին Գարեգին Զաքոյանի հետ հիմնադրել է «Լույս» կինոընկերությունը: Գենադի Մելքոնյանը մահացել է 2002 թվականի մայիսի 30-ին:

**Կալանավայրերի արվեստը**
*Հայաստան, 1998, 44’*
*ռուսերեն*

**Ռեժիսորներ, սցենարի հեղինակներ և պրոդյուսերներ՝**
Գարեգին Զաքոյան, Գենադի Մելքոնյան
**Արտադրող ընկերություն՝**
«Լույս» կինոընկերություն

Վավերագրական այս ֆիլմը, որի ընթացքում հնչում են նշանավոր կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի՝ բանտից գրված նամակները, արվեստի մասին է, որը ստեղծվում է այնպիսի վայրերում, որտեղ մարդ էակի անհատականությունը ոչնչացվում է:

## Garegin Zakoyan

Born on April 5, 1947 in Yerevan. In 1976, he defended his Ph.D thesis *Armenian Silent Cinema*. In 1973-1985, he worked at the Art Institute of the Armenian National Academy of Sciences as a research associate and as the head of Film and Television department in 1985-1991. He is the author of around 300 publications, including the books *Armenian Silent Cinema* (Yerevan, 1976) and *Film and Language* (Yerevan, 1989). In 1991, he founded the Armenian National Cinematheque. He is the founder of Apricot Tree International Documentary Film Festival and Filmadaran Film Culture Development NGO. As a director, he has made several documentary films,



such as *Prison Art* (1998), *Kajaran: Metamorphosis of Stone* (2001) and *Mon Reichshoffen* (2023).

## Gennady Melkonyan

Born on August 12, 1944 in Yerevan. In 1962-1964, he worked in “Hayfilm” studio as a light technician. In 1965, he was admitted to the Acting Faculty of Yerevan Institute of Fine Arts and Theatre, which he graduated in 1969. He worked as a director’s assistant and second director in “Hayfilm” until 1979. He made his directorial debut with the 1979 short *The Mulberry Tree*. The same year he became a member of USSR Filmmakers Union. Since then, he made about 10 films, which he directed and/or wrote, such as *The Last Sunday* (1985) and *Kite Day* (1986). In 1998, together with Garegin Zakoyan he founded the “Luys” film company. Gennady Melkonyan died on May 30, 2002.

**Prison Art**
*Armenia, 1998, 44 min*
*in Russian*

**Directors, Scriptwriters and Producers:**
Garegin Zakoyan, Gennady Melkonyan
**Production Company:** “Luys”

Narrated with letters written by renowned filmmaker Sergei Parajanov when he was imprisoned in the 1970’s, this documentary depicts the kind of art that is created in places, where the individuality of a human being is destroyed.



**Արման Երիցյան**

Ծնվել է 1975 թվականին: 2000-ին ավարտել է Երևանի մանկավարժական համալսարանի կինոռեժիսուրայի բաժինը: Աշխատել է «Monarch Films»-ում, «Ինտերնյուզ Հայաստան»-ում, «Russia Today»-ում, ինչպես նաև մի շարք հայկական հեռուստաընկերություններում: Վավերագրական ռեժիսուրայի և հեռուստալրագրության դասեր է վարել Մոսկվայի պետական համալսարանում, ՎԳԻԿ-ում, «Ինտերնյուզ Ռուսաստանում», Հարավային Կովկասի երիտասարդ կինովավերագրողների ֆորումում, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: Ժյուրիի անդամ է եղել «Ոսկե ծիրան», «Սարատովյան տանջանքներ» և «Ասելիք՝ մարդուն» միջազգային կինոփառատոներում: 2007-ից ի վեր Երիցյանը համագործակցում է «Բարս Մեդիա» վավերագրական ֆիլմերի ստուդիայի հետ: Հեղինակել է շուրջ 50 սոցիալական հոլովակ և մի շարք մրցանակակիր ֆիլմեր: 2010-ին «Հայաստանի վերջին լարախաղացը» (համառեժիսոր՝ Իննա Սահակյան) և 2015-ին «Մեկ, երկու, երեք…» վավերագրությունները լավագույն հայկական ֆիլմ են ճանաչվել «Ոսկե ծիրան» Երևանի ՄԿՓ-ում:

**Ողջույն, Ֆելինի**
*Հայաստան/Ռուսաստան, 2006, 37’*
*հայերեն՝ անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Արման Երիցյան
**Օպերատոր՝** Սարգիս Խարազյան
**Պրոդյուսեր՝** Ալեքսանդր Ռադով

Այս կինը երգում է՝ զբոսնելով Երևանի փողոցներում: Նրա ընկերներն են կատուներն ու մրջյունները: Նա տաղանդավոր է և արտասովոր: Ոմանք նրան տարօրինակ կամ նույնիսկ խենթ կանվանեն, և դա նրան կտխրեցնի: Բայց նա ունի արվեստագետի հոգի, և սեր ու կիրք կան նրա սրտում: Եվ նա ընդամենն ուզում է կիսել այդ սերն աշխարհի հետ:



## Arman Yeritsyan

Born in 1975, documentary filmmaker Arman Yeritysan graduated from Yerevan Pedagogical University's Film Department in 2000. He worked at different Armenian TV Channels. He taught a series of workshops and master classes on documentary filmmaking and TV journalism at Moscow State University, VGIK, Russian Internews, South Caucasus Young Documentary Filmmakers Forum, Yerevan State Institute of Theatre and Cinema. He was a jury member at Golden Apricot Yerevan IFF, Banff World Media Festival, "Russia" Documentary Film Festival, "Saratov Sufferings" International Documentary Festival, "Message to Man" IFF and South Caucasus Young Documentary Filmmakers Forum. Since 2007, Arman is collaborating with Bars Media Documentary Film Studio. During his career, Arman has directed over 50 PSA's and award-winning documentaries. In 2010 and 2015, the films *The Last Tightrope Dancer in Armenia* (co-directed by Inna Sahakyan) and *One, Two, Three...* have both been awarded with the Best Armenian Film prize of Golden Apricot Yerevan IFF.

**Hello, Fellini!/Ողջույն, Ֆելինի**
*Armenia/Russia, 2006, 37'*
*in Armenian w/ Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Arman Yeritsyan
**Cinematographer:** Sargis Kharazyan
**Producer:** Alexander Radov

She walks the streets of Yerevan and sings. She is friends with cats and ants. She is talented and extraordinary. Some might call her weird or even crazy and that might make her sad. But she has a soul of an artist and love and passion in her heart. All she wants to do is to share that love with the rest of the world.



## Գրիգոր Հարությունյան

Գրիգոր Հարությունյանը ծնվել է 1950 թվականին Երևանում: 1981 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետը: Աշխատել է որպես ռեժիսորի ասիստենտ «Երևան» ստուդիայում, իսկ 1988 թվականից՝ որպես ռեժիսոր «Հայկ» ստուդիայում: Դրանից ի վեր նկարահանել է մեկ տասնյակից ավելի վավերագրական ֆիլմ:

**Կայացում**
*Հայաստան, 2009, 60’*
*խոսք չկա*

**Ռեժիսոր՝** Գրիգոր Հարությունյան
**Սցենարի հեղինակներ՝**
Վալերի Գասպարյան, Գրիգոր Հարությունյան

Ֆիլմը ներկայացնում է 1988 թվականից մինչև 2008 թվականը հայ ժողովրդի և Հայաստանի անցած ուղին, քաղաքական դեպքերը, այն կարևոր իրադարձությունները, որոնք հեղինակների կարծիքով այդ երկու տասնամյակում երկրի հաջողությունների ու անհաջողությունների գրավականն են եղել:



## Grigor Harutyunyan

Grigor Harutyunyan was born in 1950 in Yerevan. In 1981, he graduated from the Directing Faculty of the Armenian Pedagogical Institute's Culture Department. He worked as a director's assistant in Yerevan Studio, and since 1988 as a director in Hayk Studio. Since then he has made several documentary films.

**Formation/Կայացում**
*Armenia, 2009, 60'*
*no dialogue*

**Director:** Grigor Harutyunyan
**Scriptwriters:** Valery Gasparyan, Grigor Harutyunyan

The film presents the path of the Armenian people and Armenia from 1988 to 2008, political developments and important events that were the key to the country's successes and failures in those two decades.





# Մունք ուրուր օնինք

# We Have Each Other



## Մանե Թադևոսյան

1995 թվականի նոյեմբերի 28-ին ծնված Մանե Թադևոսյանը սկսնակ հայ կինոռեժիսոր է, ով առաջին մասնագիտությամբ մանկական նյարդաբան է: 2021 թվականին մասնակցել է «Ֆիլմադարան» ՀԿ-ի կազմակերպած կինոյի հիմունքների աշխատարանին, որի շրջանակում ստեղծել է իր առաջին կարճամետրաժը՝ «Հպումը»: Նա մեծ հաճույք է ստանում աշխարհի գեղեցկությունը տեսախցիկի օբյեկտիվով արտահայտելուց և կարճ տեսահոլովակներ նկարահանելուց:

**Ֆիլմոգրաֆիա**
Հպում (2021), Մունք ուրուր օնինք (2023):

**Մունք ուրուր օնինք**
*Հայաստան/Արցախ, 2023, 9’*
*հայերեն՝ անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և պրոդյուսեր՝** Մանե Թադևոսյան
**Մոնտաժող՝** Մանե Թադևոսյան

Այս կարճամետրաժ վավերագրական ֆիլմը ներկայացնում է կյանքի խճանկարը Ադրբեջանի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ի վեր իրականացվող Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման պայմաններում: Ֆիլմն ասես սրտառուչ զրույցների անընդհատ փոփոխվող կալեյդոսկոպ լինի, որը բացահայտում է թե՛ հուսահատության ստվերները, թե՛ հույսի փայլերը:






## Mane Tadevosyan

Born on November 28, 1995, Mane Tadevosyan is an emerging Armenian filmmaker, who has a diploma in Pediatric Neurology. In 2021, she participated in the filmmaking basics workshop organized by Filmadaran NGO, during which she made her first short film *Touch*. She finds immense joy in capturing the beauty of the world through the camera lens and creating short videos.

**Filmography**
Touch (2021), We Have Each Other (2023).

**We Have Each Other/Մունք ուրուր օնինք**
*Armenia/Artsakh, 2023, 9'*
*in Armenian w/ Eng. subtitles*

**Director and Producer:** Mane Tadevosyan
**Editor:** Mane Tadevosyan

This short documentary paints a mosaic of life during the blockade of Artsakh (Nagorno-Karabakh), which is being implemented by the government of Azerbaijan since December 12, 2022. The film is like looking through a constantly shifting kaleidoscope of heartfelt conversations, revealing both the shadows of despair and the flickers of hope.



## Նանե Պետրոսյան

1997 թվականին Հայաստանի Տավուշի մարզի Վերին Ծաղկավան գյուղում ծնված Նանե Պետրոսյանը սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև 2015-ին ընդունվել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ: Ուսումնառության ընթացքում թղթակցել է առցանց պարբերականների: 2020 թվականից աշխատում է Հանրային ռադիոյի «Ռադիոլուր» լրատվական ծրագրում: 2022-ին նկարահանված «Արտիստը» վավերագրական ֆիլմը նրա դեբյուտային աշխատանքն է:

**Ֆիլմոգրաֆիա**
Արտիստը (2022):

**Արտիստը**
*Հայաստան, 2022, 16'*
*հայերեն՝ անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Նանե Պետրոսյան
**Օպերատորներ՝** Նանե Պետրոսյան, Էդվարդ Ասատրյան, Արմեն Շահոյան
**Մոնտաժող՝** Նանե Պետրոսյան
**Արտադրող ընկերություն՝** Հայաստանի հանրային ռադիո

Ֆիլմի կենտրոնում Հայկ Մաթևոսյանն է, ով օպերային երգիչ է, որին, սակայն, վերջին ամիսներին կարելի է ավելի հաճախ ոչ թե բեմի վրա, այլ խրամատում տեսնել: Հակոբ Պարոնյանի անվան Երաժշտական





կոմեդիայի պետական թատրոնի դերասանը նաև ՈՄԱ–ի կամավոր-ներից է, մասնակցել է Ապրիլյան և 44-օրյա պատերազմներին:

## Nane Petrosyan

Born in 1997 in the village of Verin Tsaghkavan in the Tavush region of Armenia, Nane Petrosyan studied at the local high school and afterwards in 2015 she was admitted to the Faculty of Journalism of the Yerevan State University. During her studies, she wrote for online periodicals. Since 2020, she has been working in the Radiolur news program of the Armenian Public Radio. The documentary *The Artist* shot in 2022 is her debut film.

**Filmography**
The Artist (2022).

**The Artist/Արտիստը**
*Armenia, 2022, 16'*
*in Armenian w/ Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Nane Petrosyan
**Cinematographers:** Nane Petrosyan, Edward Asatryan, Armen Shahoyan
**Editor:** Nane Petrosyan
**Production Company:** Public Radio of Armenia

The film centers around Hayk Matevosyan, an opera singer, who, however, in recent months can be seen more often not on stage, but in the trenches. An actor of the State Theater of Musical Comedy after Hakob Paronyan, he is a volunteer and participant of the 2016 April War and the 2020 44-day War in Artsakh (Nagorno-Karabakh).



## Ռոման Սաուլսկի

1975 թվականի հուլիսի 2-ին ծնված Ռոման Սաուլսկին ռեժիսոր, դերասան և սցենարիստ է: Հանրահայտ խորհրդային կոմպոզիտոր և դիրիժոր Յուրի Սաուլսկու որդին է:

**Ընտիր ֆիլմոգրաֆիա**
Սփռելով լույսը (2008), Նախորոշում (2009), Արևի համը (2023):

**Արևի համը/Вкус солнца**
Ռուսաստան/Հայաստան, 2023, 45'
ռուսերեն և հայերեն՝ հայ./անգլ. ենթագրերով

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Ռոման Սաուլսկի
**Օպերատորներ՝** Օլգա Պլեսնևիչ, Անդրեյ Կուզկին, Ալեքսանդր Դեբոլսկի
**Պրոդյուսեր՝** Յուլյա Ռիչենկո
**Մոնտաժող՝** Ռոման Սաուլսկի
**Հնչյունավորող՝** Ալեքսանդր Դեբոլսկի
**Արտադրող ընկերություն՝** 123 Stories Producting Group

Ֆիլմի կենտրոնում Սուսաննա Թափալցյանն է, ով մոսկովյան «Փարոս» սրճարանի սեփականատերն է: Ֆիլմի ընթացքում տիկին Սուսաննան վերհիշում է իր նախնիների պատմությունը, թե ինչպես իրենք վերապրեցին Հայոց ցեղասպանությունը, ու թե ինչպես ինքը ճամփորդեց պատմական հայրենիք:





## Roman Saulsky

Born on July 2, 1975, Roman Saulsky is a director, actor and scriptwriter. He is the son of famed Soviet Russian composer and conductor Yuri Saulsky.

**Select Filmography**
Shedding Light (2008), Purpose (2009), Taste of the Sun (2023).

**The Taste of the Sun/Вкус солнца**
Russia/Armenia, 2023, 45’
in Russian and Armenian w/ Arm./Eng. subtitles

**Director and Scriptwriter:** Roman Saulsky
**Cinematographers:** Olga Plesnevich, Andrey Kuzkin, Aleksandr Debolsky
**Producer:** Yulia Richenko
**Editor:** Roman Saulsky
**Sound:** Aleksandr Debolsky
**Production Company:** 123 Stories Producting Group

The film centers on Susanna Tapaltsyan, an Armenian businesswoman, who owns a café called “Paros” (i.e. lighthouse) in Moscow. As the film goes on, she recalls the stories of her ancestors surviving the Armenian Genocide, and conveys how she herself travelled to her historical homeland.





# ՀԱՏՈՒԿ
## ցուցադրություններ

# SPECIAL
## Screenings



## Զախար Խասանով

Զախար Խասանովը սկսնակ կինոգործիչ է, ով այժմ սովորում է Նոր կինոյի մոսկովյան դպրոցում:

**Ֆիլմոգրաֆիա**
Բանգլադեշի լավ ռուսը (2023):

**Բանգլադեշի լավ ռուսը/Хороший русский из Бангладеш**
*Ռուսաստան/Հայաստան, 2023, 18'*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր, սցենարի հեղինակ և օպերատոր՝** Զախար Խասանով

Երևանի ծայրամասում ռեժիսորը հանդիպում է իր պես ռուս մի տղամարդու, ով ինքն իրեն Իվան կամ Երանելի Հովհաննես է կոչում: Մի քանի շիշ գարեջրից հետո Իվանը լծվում է իր նոր ընկերների հետ քաղաքի կենտրոնում գեյ-ակումբ գտնելու առաքելությանը:




## Zakhar Khasanov

Zakhar Khasanov is an emerging filmmaker, who is currently studying at the Moscow School of New Cinema.

**Filmography**
The Good Russian from Bangladesh (2023).

**The Good Russian from Bangladesh/Хороший русский из Бангладеш**
*Russia/Armenia, 2023, 18'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director, Scriptwriter and Cinematographer:** Zakhar Khasanov

In the outskirts of Yerevan, the director meets a fellow Russian, who calls himself Ivan or John the Beloved. After one too many beers, Ivan sets out on a quest to find a gay club in the city center and takes his newly found friends along with him.



## Քորթնի Սթիվենս

Քորթնի Սթիվենսը կինոռեժիսոր է, որը ստեղծագործում է Լոս Անջելեսում: Նրա ոչ խաղարկային, փորձարարական ֆիլմերն անդրադառնում են լեզվի երանգներին, պատմական հիշողությանն ու կանանց կյանքին:

**Ֆիլմոգրաֆիա**
Իդա արևմտյան աքսոր (2015), Խառը ազդանշաններ (2018), Ամերիկյան հատվածը (2020), Կինո-19 (համառեժիսոր, 2020), Մաքուր կվինտաներ (2021), Երկիր իգական (2021):

**Երկիր իգական/Terra Femme**
*ԱՄՆ, 2021, 63’*
*անգլերեն՝ հայ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Քորթնի Սթիվենս
**Պրոդյուսեր՝** Քորթնի Սթիվենս
**Մոնտաժողներ՝** Քորթնի Սթիվենս, Դունիա Սիչով
**Հնչյունավորող՝** Փոլ Հիլ
**Կոմպոզիտոր՝** Սառա Դավաhի

Այսօր դժվար է պատկերացնել, բայց ընդամենը հարյուր տարի առաջ աշխարհի մեծ մասը դեռևս terra incognita էր մարդկանց զգալի քանակության համար: Երկար ուղևորություններն ունևոր և հիմնականում արական սեռի արկածասերների բացառիկ արտոնությունն էին: Թեթև կինոխցիկների գյուտը բացեց Երկրագունդը բոլոր նրանց համար, ովքեր կարող էին կինոյի տոմս գնել: Ապշեցնող գեղեցկության այս արխիվային ֆիլմը բաղկացած է մոնտաժված կադրերից, որոնք նկարահանել են հետաքրքրասեր կանայք, ովքեր ճամփորդում էին աշխարհով մեկ անցյալ դարի առաջին կեսին:

## Courtney Stephens

Courtney Stephens is a filmmaker based in Los Angeles. Her non-fiction and experimental films address the contours of language, historical memory, and women’s lives.



**Filmography**
Ida Western Exile (2015), Mixed Signals (2018),
The American Sector (2020), Cinema-19 (co-director, 2020),
Perfect Fifths (2021), Terra Femme (2021).

***Terra Femme***
*USA, 2021, 63’*
*in English w/ Arm. subtitles*

**Director and Scriptwrtier:** Courtney Stephens
**Producer:** Courtney Stephens
**Editors:** Courtney Stephens, Dounia Sichov
**Sound:** Paul Hill
**Music:** Sarah Davahi

It is difficult to imagine now, but a hundred years ago great areas of the world were still terra incognita for most people. Long-distance travel was the exclusive preserve of well-to-do adventurers, most of them male. The arrival of lightweight film cameras unlocked the globe for anyone who could afford a cinema ticket. This stunningly beautiful found-footage film comprises edited scenes shot by inquisitive women who travelled the world in the first half of the last century.



## Դարյա Խրենովա

1979 թվականի հուլիսի 17-ին Մոսկվայում ծնված Դարյա Խրենովան Գերասիմովի անվան Կինեմատոգրաֆիայի համառուսաստանյան պետական ինստիտուտի (ՎԳԻԿ) շրջանավարտ է: Նա աշխատել է ռուսական հեռուստաալիքներում: 2018 թվականին դասախոսությունների շարք է վարել ու կինոցուցադրություններ է կազմակերպել Ֆորդհամի համալսարանում (Նյու Յորք), Սմիթ քոլեջում, Մասաչուսեթսի Ամհերսթ համալսարանում, Մաունթ Հոլյոք քոլեջում (Սաութ Հեդլի) և Բոսթոնի սլավոնական ֆորումում: Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության ու Ոչ խաղարկային կինոյի և հեռուստատեսության գիլդիայի անդամ է: Նաև Մոսկվայի կինոդպրոցի «Նոր վավերագրություն» դասընթացների համակարգողն է:

**Ֆիլմոգրաֆիա**

Վինչենցո Բիանկիի կախարդական լեռը (2013), Կյանքի գլխավոր ցնծությունը (2014), Բարոնի վերջին արշավանքը (2015), Ո՞վ իմ ամուսինը կդառնա (2015), Արջերի երկիրը (2018), Անտեսանելի հույս (2021), Սարի թագավորը (2022), Հույսի չսառցակալող նավահանգիստը (2022):

**Հույսի չսառցակալող նավահանգիստը/**
**Незамерзающий порт надежды**

*Ռուսաստան, 2022, 78'*
*ռուսերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Դարյա Խրենովա
**Օպերատորներ՝** Ալեքսանդրա Իվանովա, Ալեքսանդր Կոնովալով, Յանա Կալեդին
**Պրոդյուսեր՝** Զառա Յանգուլբիևա
**Մոնտաժող՝** Դարյա Խրենովա
**Հնչյունավորող՝** Վիկտոր Բրուս
**Արտադրող ընկերություն՝** Magic Mountain Studio

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Արկտիկայում տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին բազմաթիվ փաստեր Խորհրդային Միության տարիներին երկար ժամանակ կոծկվում էին: Պատերազմին անպատրաստ ռուսական Հյուսիսի ողջ ողբերգությունը նկարագրված է Հյուսիսային նավատորմի ադմիրալ Գոլովկոյի օրագրերում,

որոնք այժմ վերականգնում և հրատարակման է պատրաստում նրա որդին:



## Daria Khrenova

Born on July 17, 1979, in Moscow, Daria Khrenova graduated from the All-Russian Institute of Cinematography after Gerasimov (VGIK) as a film director. She worked on Russian TV channels. In 2018, she held a series of lectures and film screenings at Fordham University (New York), Smith College, UMass (Amherst), Mount Holyoke College (South Hadley), the Slavic Forum ASEEES (Boston). She is a member of the Union of Film Professionals of the Russian Federation and the Guild of Non-Fiction Cinema and TV. She is also the curator of the «New Doc» courses at Moscow Film School.

**Filmography**

The Magic Mountain of Vincenzo Bianchi (2013), The Main Triumph of Life (2014), The Last Campaign of the Baron (2015), Who Will Be My Husband? (2015), Land of Bears (2018), Invisible Hope (2021), The King of the Mountain (2022), The Unfreezing Harbor of Hope (2022).

**The Unfreezing Harbor of Hope/Незамерзающий порт надежды**
*Russia, 2022, 78'*
*in Russian w/ Arm./Eng. subtitles*

**Director and Scriptwriter:** Daria Khrenova
**Cinematographers:** Alexandra Ivanova, Alexander Konovalov, Yana Kaledin
**Producer:** Zara Yangulbieva
**Editor:** Daria Khrenova
**Sound:** Victor Brus
**Production Company:** Magic Mountain Studio

Many facts of the Great Patriotic War in the Arctic were hushed up for many years in the Soviet Union. The whole tragedy of the outbreak of war in the unprepared Russian north was described in diaries of Admiral of the Northern Fleet Golovko, which are being restored now for publication by his son.



## Չեն Դանյան

Չեն Դանյանը գրող է Շանհայից, որի գրական աշխատանքները լայնորեն տարածվում և հրատարակվում են աշխարհում: Ծնվել է Պեկինում և մանուկ հասակում տեղափոխվել Շանհայ: Նրա տեքստերի առանցքում Շանհայն ու տեղի կանայք են: Առավել հայտնի է իր կենսագրական եռերգության՝ «Շանհայի հիշատակարան», «Շանհայի արքայադուստր», «Շանհայի գեղեցկություն» գրքերի շնորհիվ: «Պահուստը» նրա առաջին վավերագրական ֆիլմն է:



**Ֆիլմոգրաֆիա**
Պահուստ (2021):

**Պահուստ/**萨瓦流淌的方向
*Չինաստան/Սերբիա, 2021, 93’*
*չինարեն, անգլերեն ու սերբերեն՝*
*հայ./անգլ./չին. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Չեն Դանյան
**Պրոդյուսեր՝** Վան Ե
**Օպերատոր՝** Կե Դինդին
**Մոնտաժող՝** Ֆեն Սի

Հարավսլավիայի վերելքով ու անկումով ծանրաբեռնված ծեր խմբագիրը չի հրաժարվում պետական հրատարակչություններից ու գրախանութներից, որոնք ժամանակին հրաշալի էին, բայց հիմա փլուզման եզրին են: Երիտասարդ համադրողը փորձում է օգտագործել հին հարավսլավական ամենօրյա իրերը՝ բացահայտելու, թե ինչպես է նախկին ապրելակերպն արտահայտվում այսօր: Սա Ոդիսևսի շրջագայությունն է Բելգրադի մշակութային ժառանգության ծառուղիներով: Ճամփորդ չինացի գրողն անցնում է այս վայրերով և տեսնում երկու հերոսների կյանքն օտարի աչքերով: Ֆիլմն արձանագրում է այն, ինչ նա տեսնում է, զգում է ու նաև նրա անձնական ցավը:



## Chen Danyan

Chen Danyan is a writer from Shanghai, whose literary works are widely disseminated and published all over the world. Born in Beijing, she moved to Shanghai as a child and her writing revolves around Shanghai and Shanghainese women. She is best known for her trilogy of biographical narratives: *Shanghai Memorabilia*, *Shanghai Princess*, and *Shanghai Beauty*. *The Storage* is her first documentary film.

**Filmography**
The Storage (2021).

**The Storage/萨瓦流淌的方向**
*China/Serbia, 2021, 93’*
*in Chinese, English and Serbian w/ Arm./Eng./Chin. Subtitles*

**Director and Scriptwriter:** Chen Danyan
**Producer:** Wang Ye
**Cinematographer:** Ke Dingding
**Editor:** Feng Xi

Burdened with Yugoslavia’s rise and fall, an old editor in chief sticks to the state-owned publishing houses and bookstores that were once brilliant but are now on the verge of collapse. A young curator tries to use daily objects from old Yugoslavia to explore how the old way of life sustains life today. This is an Odysseus tour of the cultural heritage of Belgrade. A traveling Chinese writer passes through the area and sees the lives of the two characters from an outsider’s perspective. The film records what she sees, feels, and her pain.




## Մարջան Խոսրավի

Մարջան Խոսրավին երիտասարդ իրանուհի կինոռեժիսոր է, ով կինո և մեդիաարվեստ է ուսանել: Տարիներ շարունակ գրելուց, ուսանելուց, կինոարտադրության մեջ աշխատելուց և IDFA-ի մրցանակիր «Աշո» և այլ ֆիլմերում ռեժիսորի օգնական լինելուց հետո 2018 թվականին վերջապես նկարահանեց իր առաջին կարճամետրաժ վավերագրությունը՝ «Արյան գինը», որը գնահատանքի արժանացավ ազգային մի շարք փառատոներում, ինչպես օրինակ՝ Թեհրանի կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոնում և «Սինեմա վերիտե» վավերագրական ֆիլմերի փառատոնում: Մարջանը սովորաբար անդրադառնում է կանանց իրավունքների և երեխաների խնդիրների թեմաներին, և նրա ֆիլմերի կենտրոնում սեռական հավասարությունն ու կանանց սոցիալական հարցերն են:

**Ֆիլմոգրաֆիա**

Արյան գինը (2018), Ձյունոտ մայրիկ (2019), Ձյունը կանչում է (2019), Վադիյար (2020), Ձիու երազը (2021), Տիկին Իրանի ամուսինը (2023):

**Տիկին Իրանի ամուսինը**

*Իրան, 2023, 27’*

*պարսկերեն՝ հայ./անգլ. ենթագրերով*

**Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝** Մարջան Խոսրավի
**Օպերատոր՝** Մահդի Ազադի
**Պրոդյուսեր՝** Միլադ Խոսրավի
**Մոնտաժող՝** Լողման Սառխանավար
**Կոմպոզիտոր՝** Մեհդի Խոսրավի
**Հնչյունավորող՝** Արաշ Ղասեմի
**Արտադրող ընկերություն՝** Seven Springs Pictures

Սեռական ապարտեիդ է տիրում Իրանում ընտանեկան և աշխատանքային հարաբերությունների այս հետազոտության մեջ: Սուլթան Մոհամմադի թագավորությունը լեռան վրա է, և այն ներառում է երկու կանանց՝



Իրանին և Սառային, իրենց 11 երեխաներին, և նրա ոչխարների հոտը: Ինչպես բոլոր գահակալները՝ նա էլ ձգտում է պահպանել իր իշխանությունը և ունեցվածքը, սակայն իր հեղինակությունը և ուժը պահպանելու պարտականությունը հիմնականում նրա կանանց ուսերին է: Իր տարածքներն ընդլայնելու համար նա մտադիր է երրորդ անգամ ամուսնանալ:

**Պարգևներ**
Լավագույն կարճամետրաժ ֆիլմ, HotDocs, Տորոնտո, Կանադա, 2023:

## Marjan Khosravi

Marjan Khosravi is a young Iranian women filmmaker who studied Cinema and Media Art. After years of writing, studying and working in cinema and film production and being assistant director of many films like *Asho* (IDFA winner) and *The Skier*, finally in 2018 she made her first short documentary, *The Price of Blood*, which garnered much admiration in many national festivals like Tehran International Short Film Festival and Cinéma Vérité Documentary Film Festival. Marjan usually focuses on women rights, children issue and gender equality and women's social problems are the leitmotiv in all her films.

**Filmography**
The Price of Blood (2018), Snowy Mother (2019), The Snow Calls (2020), Vadiyar (2021), The Dream of a Horse (2021-2022), Mrs. Iran's Husband (2023).

**Mrs. Iran's Husband**
*Iran, 2023, 27'*
*in Farsi w/ Arm./Eng. subtitles*





**Director and Scriptwriter:** Marjan Khosravi
**Cinematographer:** Mahdi Azadi
**Producer:** Milad Khosravi
**Editor:** Loghman Saokhanvar
**Composer:** Mehdi Khosravi
**Sound:** Arash Ghasemi
**Production Company:** Seven Springs Pictures

Gender apartheid is front and center in this pointed exploration of family and labor in Iran. Sultan Mohammad's kingdom is on the mountain, and it includes two wives, Iran and Sara and 11 children, and his flock of sheep. Like all rulers, he strives to maintain his power and assets, but the role and duty of maintaining his prestige and power lies mainly on the shoulders of her wives. To expand his territory, he intends to marry for the third time.

**Awards**
Best Short Film, HotDocs, Toronto, Canada, 2023.

# Մեր գործընկերները / Our Partners

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT THE REPUBLIC OF ARMENIA

ՓԱՄԲԱԿ համայնք

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

LORI PROVINCE ADMINISTRATION

Ծաղկուն. Շարժուն. Իրական.

Antares

DEBAFOUN RESTAURANT

AYRUDZI RIDING CLUB ECO-CULTURAL NGO

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ «ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

FOLK ARTS HUB FOUNDATION

GOETHE-ZENTRUM KOOPERATIONSPARTNER

GOETHE INSTITUT

AMBASSADE DE FRANCE EN ARMÉNIE

*Liberté*
*Égalité*
*Fraternité*

INSTITUT FRANÇAIS Հայաստան

ymca spitak

ԱԼՈՒՐԻԱ ALLURIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

NATIONAL LIBRARY OF ARMENIA

NCCA National Cinema Center of Armenia

filmadaran

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ
IX ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

IX APRICOT TREE
INTERNATIONAL DOCUMENTARY FILM FESTIVAL

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SUPPORTED BY THE REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT